ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2017

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Դատավորների և դատախազների համար)

ԵՐԵՎԱՆ 2017

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:
ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել կարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել՝ www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

Facebook.com/UNICEFArmenia Instagram.com/UNICEF_Armenia

Երեխաների մասնակցությամբ դատավարության գործառնական ուղեցույցը՝ նախատեսված դատավորների և դատախազների համար, մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) աջակցությամբ իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիության ապահովման նպատակով կայուն համագործակցության ընդլայնում» ծրագրի շրջանակում:

Սույն ուղեցույցը բաղկացած է 2 բաժիններից. Իրավական հատվածում ներկայացվում է երեխաների մասնակցությամբ դատավարությունների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերը և սկզբունքները, դատավարությանը մասնակցող երեխաների իրավունքները և դրանց մեկնաբանությունները, հոգեբանական հատվածում՝ անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների անցկացման հոգեբանական մոտեցումները և սկզբունքները, անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վկայությունների և ցուցմունքների ձևավորման գործընթացի վրա,դատավարական գործընթացում կիրառվող հոգեբանական գործիքակազմը, դրանց կիրառման նկարագրությունը և ստացված արդյունքների հոգեբանական վերլուծությունը:

Փորձագետներ
Նարինե Ալեքսանյան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հրանտ Ավանեսյան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատասխանատու՝ Գայանե Հովակիմյան

«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մովսես Խորենացու 162ա
հեռ. +37410 574 406
էլ. փոստ: info@lawinstitute.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....3
ԲԱԺԻՆ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍ.....4

1.1 Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային իրավական չափանիշները……....6
1.2 Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների հիմնական տարրերը……...….19
1.3 Երեխաների մասնակցությունը մինչդատական և դատական վարույթում……..……...41
1.4 Երեխաների մասնակցությամբ դատավարության գործառնական ուղեցույցի կիրառման հիմնախնդիրներ……..….46

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....51

ԲԱԺԻՆ2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ.....57

2.1 Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջազգային փորձը….....……...……...62

2.2 Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների անցկացման հոգեբանական մոտեցումները և սկզբունքները…….....66

2.3 Անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վկայությունների և ցուցմունքների ձևավորման գործընթացի վրա.....74

2.4 Գործնական առաջարկներ անչափահասների հետ աշխատանքի արդյունավետության ապահովման.....83

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ.....85
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....87

ԲԱԺԻՆ 1.

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 1. ԻՐԱՎԱԿԱՆ

Մաս 1. Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային իրավական չափանիշները.....6

1.1 Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը.....6

1.2 Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային չափանիշներից բխող հիմնարար սկզբունքները..... 11

Մաս 2. Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների հիմնական տարրերը.....19

Մաս 3. Երեխաների մասնակցությունը մինչդատական և դատական վարույթում.....41

Մաս 4. Երեխաների մասնակցությամբ դատավարության գործառնական ուղեցույցի կիրառման հիմնախնդիրներ.....46

Հավելված 1. Օգտագործված աղբյուրների ցանկ.....51

Հավելված 2. Կազմակերպությունների ցանկ.....53

Հավելված 3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ցանկ…….....56

ՄԱՍ 1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.1. Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը

Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային նորմերը, սկզբունքները և չափանիշները սահմանված են մի շարք միջազգային փաստաթղթերով, որոնք ընդունվել են տարբեր միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Միջազգային փաստաթղթերը հաստատում են երեխաների կարգավիճակը՝ որպես իրավունքի կրողներ: Հիմնական միջազգային փաստաթղթերն են.

1. **ՄԱԿ-ի 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան[1].** Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման կարևորագույն միջազգային իրավական փաստաթուղթն է, քանի որ այն իրավաբանորեն պարտադիր է ՄԱԿ-ի գրեթե բոլոր անդամ երկրների համար (Հայաստանի համար ուժի մեջ է մտել 22.07.1993թ.): Անչափահասների արդարադատությանն են վերաբերում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 37-րդ և 40-րդ հոդվածները: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան միտված է դիտարկել երեխային որպես լիարժեք մարդկային էակ:
2. **ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ[2]** *(Պեկինյան կանոններ, հաստատվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով)*, որոնք ուղեցույց են պետությունների համար առ այն, թե ինչպես պաշտպանել երեխաների իրավունքները և հարգել նրանց կարիքները անչափահասների արդարադատության առանձին և մասնագիտացված համակարգերը մշակելիս: Այս փաստաթուղթն առաջին միջազգային իրավական գործիքն է, որում անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նորմերը ներկայացված են համապարփակ և հանգամանորեն՝ հաշվի առնելով երեխայի իրավունքները և զարգացումը: Այդ Կանոններն ընդունվել են մինչև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ընդունումը, և դրանց բազմաթիվ սկզբունքներ տեղ են գտել են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի տեքստում:

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503
[2] http://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/beijingrules.pdf

3. **ՄԱԿ-ի 1990թ. Ազատազրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները**[3] *(«Հավանայի կանոններ»)*, որոնք սահմանում են այնպիսի չափորոշիչներ, որոնք կիրառվում են, երբ երեխան (մինչև 18 տարեկան ցանկացած անձը) դատական, վարչական կամ այլ հանրային իշխանության մարմնի կողմից անազատության մեջ է պահվում որևէ հաստատությունում կամ հիմնարկում (քրեական, ուղղիչ, դաստիարակչական կամ պաշտպանության միջոցների կիրառման համար և անկախ այն հանգամանքից, թե ազատությունից զրկելը տեղի է ունեցել դատապարտման, հանցանք կատարելու հիմնավոր կասկածի թե այն պատճառով, որ երեխան դիտարկվել է որպես «ռիսկային»): Բացի այդ, այս փաստաթուղթն ամրագրում է համընդհանուր սկզբունքները, որոնք սահմանում են երեխային ազատությունից զրկելու հատուկ հանգամանքները, ընդգծելով, որ ազատազրկումը պետք է լինի ծայրահեղ միջոց, որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցով և իրականացվի սահմանափակ ու բացառիկ դեպքերում:
   Ազատազրկման անխուսափելիության իրավիճակների համար մանրամասն սահմանված են ազատազրկման վայրի պայմանների նվազագույն չափորոշիչներ: «Հավանայի կանոնները» ծառայում են որպես միջազգայնորեն ընդունված շրջանակ, որի նպատակն է հակազդել ազատազրկման վնասակար ազդեցությանը՝ երաշխավորելով երեխաների իրավունքների հանդեպ հարգանքը:
4. **1990թ. ՄԱԿ-ի ուղենիշները Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ**[4] *(«Ռիադյան սկզբունքներ»)*, որոնք ներկայացնում են կանխարգելման և սոցիալական վերաինտեգրման համապարփակ և պրոակտիվ մոտեցումը, որը մանրամասնում է սոցիալական գրեթե բոլոր ոլորտներին՝ ընտանիքին, դպրոցին, հասարակությանը, լրատվամիջոցներին, սոցիալական քաղաքականությանը, օրենսդրությանը և անչափահասների արդարադատությանն առնչվող սոցիալական և տնտեսական ռազմավարությունները: անխարգելումը դիտարկվում է ոչ միայն որպես բացասական իրավիճակների հաղթահարման, այլև բարեկեցությանն ու բարգավաճմանն օժանդակող պոզիտիվ միջոց: Այն պահանջում է առավել պրոակտիվ մոտեցում, որում պետք է ներառված լինեն «ողջ հասարակության՝ անչափահասների ներդաշնակ զարգացումը երաշխավորող ջանքերը»:
5. **ՄԱԿ-ի Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների նվազագույն ստանդարտ կանոնները**[5] *(Տոկիոյի կանոններ)*, որի նպատակն է նպաստել

[3] https://www.unodc.org/pdf/criminal_justice/United_Nations_Rules_for_the_Protection_of_Juveniles_Deprived_of_their_Liberty.pdf
[4] http://www.un.org/documents/ga/res/45/a45r112.htm
[5] http://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/tokyorules.pdf

քրեական արդարադատության իրականացման մեջ համայնքային ներգրավվածությանը, հատկապես իրավախախտների ուղղման ոլորտում, ինչպես նաև իրավախախտների մեջ զարգացնել պատասխանատվություն հասարակության հանդեպ: «Տոկիոյի կանոնները» իրացնելիս պետությունները պետք է ապահովեն իրավախախտների իրավունքների, տուժողների և հանրության անվտանգության, հանցագործությունների կանխման հարցում հասարակության մտահոգության միջև համապատասխան հավասարակշռությունը: Հանցանքի բնույթին և ծանրությանը, հանցագործի անհատականությանը, նրան բնութագրող հատկություններին և հասարակության պաշտպանությանը համապատասխան առավելագույն ճկունություն ապահովելու, ինչպես նաև ազատությունից «ոչ անհրաժեշտ» զրկումից խուսափելու համար քրեական արդարադատության համակարգը պետք է ապահովի ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ՝ սկսած մինչդատական վարույթից մինչև դատապարտմանը հետևող փուլ: Ոստիկանությունը, դատախազությունը կամ վարույթն իրականացնող այլ մարմինները պետք է լիազորված լինեն ազատ արձակելու մեղադրյալին, եթե նրանց կարծիքով գործը շարունակելու անհրաժեշտություն չկա՝ ելնելով հասարակության պաշտպանության, հանցագործությունների կանխման կամ օրենքի նկատմամբ հարգանք ներշնչելու ու տուժողի իրավունքները պաշտպանելու նկատառումներից:

6. **Քրեական արդարադատական համակարգում երեխաների վերաբերյալ գործողությունների մասին ուղենիշներ**[6] («Վիեննայի սկզբունքներ»), որի «Քրեական արդարադատության համակարգում երեխաներին առնչվող գործողությունների ուղեցույց սկզբունքներ» հավելվածում ներկայացված են ընդգրկուն միջոցներ, որոնք պետք է ձեռնարկել անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման արդյունավետ գործող համակարգ ստեղծելու նպատակով:
7. **ՄԱԿ-ի Տուժող և վկա հանդիսացող երեխաների ներգրավմամբ արդարադատության վերաբերյալ ուղեցույց** (ECOSOC, Res 2005/20, 2005)[7], որը տուժող և վկա հանդիսացող երեխաների ներգրավմամբ արդարադատության իրականացումն ապահովելու համար, սահմանում է պատասխանատու դերակատարների կողմից այնպիսի փոխկապակցված սկզբունքների նկատմամբ հարգանք, ինչպիսիք են՝ արժանապատվությունը, խտրականության արգելքը, երեխայի լավագույն շահը, պաշտպանությունը, ներդաշնակ զարգացումը և մասնակցության իրավունքը:

[6] http://www.un.org/documents/ecosoc/res/1997/eres1997-30.htm
[7] http://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf

8. **ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ղեկավար ցուցում. ՄԱԿ-ի մոտեցումը երեխաների ներգրավվածությամբ արդարադատության վերաբերյալ**[8] (2008թ.), որով սահմանվում են երեխաների ներգրավվածությամբ արդարադատության 9 հիմնարար սկզբունքները: Երեխաների ներգրավվածությամբ արդարադատության վերաբերյալ ՄԱԿ-ի մոտեցումը ներառում է երկու ուղղություն, որոնցից առաջինը միտված է իրավունքի գերակայության նախաձեռնություններում երեխաների նկատմամբ ավելի մեծ ուշադրության ապահովմանը, իսկ երկրորդն առաջարկում է լրացուցիչ միջամտություններ, որոնք անհրաժեշտ են հատկապես երեխաների մասնակցությամբ արդարադատության իրականացման առումով՝ իրավունքի գերակայության ջանքերն ամրապնդելու համար և երեխաների իրավունքների լիարժեք հարգանքն ապահովելու համար:
9. **ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղենիշները** (2010թ.)[9], որը սահմանում է քաղաքականության և պրակտիկայի ցանկալի ուղղություններ՝ նպատակ ունենալով բարելավել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և ծնողական խնամքից զրկված կամ զրկման վտանգի տակ գտնվող երեխաների բարեկեցության և պաշպանության վերաբերյալ այլ համապատասխան միջազգային փաստաթղթերի դրույթների կիրառումը:
10. **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 18/12 բանաձև Արդարադատություն, հատկապես անչափահասների վերաբերյալ արդարադատություն իրականացնելիս մարդու իրավունքների մասին**[10] **(2011թ.),** որը, ի թիվս այլոց, վերահաստատում է, որ երեխայի լավագույն շահը պետք է առաջնային նշանակություն ունենա նրան ազատությունից զրկելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս, մասնավորապես, երեխաներին և անչափահասներին ազատությունից զրկումը պետք է օգտագործվի միայն որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամկետով, մասնավորապես դատաքննությունից առաջ, և որ անհրաժեշտ է ապահովել ձերբակալման, կալանավորման կամ ազատազրկման դեպքում երեխաների առավելագույնս առանձնացումը չափահասներից, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահին:
11. **Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 (2007) Ընդհանուր մեկնաբանությունը Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին**[11]**,** որի նպատակն է տրամադրել անդամ պետություններին առաջարկություններ և ուղենիշներ

[8] https://www.unodc.org/pdf/criminal_justice/Guidance_Note_of_the_SG_UN_Approach_to_Justice_for_Children.pdf
[9] https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf
[10] http://srsg.violenceagainstchildren.org/sites/default/files/documents/docs/A_HRC_ES_18_12%20_Eng.pdf
[11] http://www.refworld.org/docid/4670fca12.html

անչափահասների մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ քաղաքականության բովանդակության վերաբերյալ, հատուկ շեշտադրելով անչափահասների հանցավորության կանխարգելումը, անչափահասների հանցավորությանն արձագանքելու այլընտրանքային միջոցների ներդրումը առանց դատավարական գործընթացների, և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 37-րդ և 40-րդ հոդվածների դրույթների մեկնաբանության և իրականացման համար:

12. **Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունը Երեխայի՝ իր լավագույն շահը առաջնահերթ համարելու իրավունքի մասին (հոդված 3, պարագրաֆ 1)[12],** որը ներկայացնում է մանրամասն մեկնաբանություններ Երեխայի իրավունքների կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի վերաբերյալ:
13. **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականը անդամ երկրներին Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ**[13], որի նպատակն է պաշտպանել սանկցիաների կամ պատասխանատվության միջոցների ենթակա անչափահաս իրավախախտների իրավունքներն ու անվտանգությունը և նպաստել նրանց ֆիզիկական, հոգևոր և սոցիալական բարեկեցությանը՝ համայնքային սանկցիաների կամ միջոցների կամ ազատությունից զրկելու հետ կապված որևէ միջոցի ենթարկվելիս:
14. **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականը Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ**[14], որն առաջարկում է անդամ պետություններին անչափահասների հանցավորությանն արձագանքելու վերաբերյալ առավել ռազմավարական մոտեցում:
15. **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)5 հանձնարարականը Փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների վերաբերյալ**[15], որը, սահմանելով փակ հաստատություններում պահվող երեխաների հատուկ իրավունքները, հիմնական սկզբունքները, ուղենիշները և որակի չափանիշները, առաջարկում է անդամ պետություններին ընդունել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ ազգային ուղենիշներ և գործողությունների պլաններ, ապահովելու համար հանձնարարականով սահմանված սկզբունքների և որակի չափանիշների իրականացումը,

[12] http://www.refworld.org/docid/51a84b5e4.html
[13] https://www.unicef.org/tdad/councilofeuropejjrec08(1).pdf
[14] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805df0b3
[15] http://www.refworld.org/docid/43f5c53d4.html

նպատակ ունենալով հասնել փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների լիարժեք իրականացմանը, անկախ նրանց գտնվելու վայրի բնույթից և պատճառից:

16. **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(87)20 հանձնարարականը Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ**[16], որն առաջարկում է անդամ պետություններին վերանայել իրենց օրենսդրությունն ու պրակտիկան, հաշվի առնելով հանձնարարականում սահմանված չափանիշները կանխարգելման, մեդիացիայի, անչափահասների ներգրավվածությամբ վարույթների և միջամտությունների վերաբերյալ:
17. **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(99)19 հանձնարարականը Քրեական գործերով մեդիացիայի վերաբերյալ**[17], որը հանձնարարում է, որպեսզի անդամ երկրների կառավարությունները քրեական գործերով մեդիացիան սահմանելիս հաշվի առնեն հանձնարարականի հավելվածով սահմանված սկզբունքները:
18. **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2010թ. Երեխայի համար նախատեսված արդարադատության ուղենիշներ**[18], որը անդամ պետությունների համար հանդիսանում է գործիք՝ իրենց դատական և ոչ դատական համակարգերը երեխաների հատուկ իրավունքներին, կարիքներին և շահերին համապատասխանեցնելու համար:

1.2. Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային չափանիշներից բխող հիմնարար սկզբունքները

Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը հիմնված են մի շարք հիմնարար սկզբունքների վրա, որոնք կիրառելի են անչափահասների մասնակցությամբ դատավարական ողջ գործընթացի նկատմամբ: Դրանք համարվում են ուղենիշային, կողմնորոշիչ սկզբունքներ, որոնցից բխում են անչափահասների մասնակցության դատավարական գործընթացների տարբեր տարրերի վերաբերյալ միջազգային չափանիշները:

Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների վերաբերյալ միջազգային չափանիշներից բխող հիմնարար սկզբունքներն են՝

1. **իրավունքի գերակայության սկզբունք,**
2. **երեխայի լավագույն շահի սկզբունք,**
3. **լսված լինելու և մասնակցության իրավունք,**

[16] http://archivio.transnazionalita.isfol.it/file/CoE_Rec_R87-20%20Eng.pdf
[17] https://rm.coe.int/16806f405a
[18] https://rm.coe.int/16804b2cf3

4. **արժանապատվության պաշտպանություն,**
5. **խտրականության արգելք:**

1. **Իրավունքի գերակայության սկզբունք:** Երեխաների նկատմամբ իրականացվող արդարադատական ցանկացած միջամտություն պետք է հիմնվի իրավունքի գերակայության սկզբունքի վրա: Երեխաները պետք է օրենքով ճանաչվեն որպես նյութական և դատավարական իրավունքների կրողներ: Որևէ օրենք չպետք է ունենա հետադարձ ուժ:

Մեկնաբանություն

«Իրավունքի գերակայությունը կառավարման սկզբունք է, որի շրջանակներում բոլոր մարդիկ, հանրային և մասնավոր ինստիտուտները և կազմակերպությունները, ներառյալ պետությունը, պատասխանատվություն են կրում հրապարակված, հավասարապես կիրառվող և անկողմնակալ կերպով մեկնաբանվող օրենքների համաձայն, որոնք համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային նորմերին և չափանիշներին: Դա նաև պահանջում է միջոցներ՝ իրավունքի գերակայության, օրենքի առջև բոլորի հավասարության, օրենքի առջև պատասխանատվության, օրենքի կիրառման արդարացիության, իշխանությունների տարանջատման, որոշումների կայացման գործընթացին մասնակցության, իրավական որոշակիության, կամայականությունների բացառման և ընթացակարգային ու իրավական թափանցիկության սկզբունքների ապահովման համար»[19]:

2. **Երեխայի լավագույն շահ:** Երեխաների հետ կապված բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահին պետք է առաջնային ուշադրություն հատկացվի:

[19] ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց. Իրավունքի գերակայությունը և անցումային արդարադատությունը կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային հասարակություններում (S/2004/616), պարագրաֆ 6, http://archive.ipu.org/splz-e/unga07/law.pdf

Մեկնաբանություն

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը համարվում է ամենակարևոր և ամենահայտնի դրույթներից մեկը, որը երեխայի լավագույն շահը սահմանում է որպես առաջնահերթություն երեխաների նկատմամբ իրականացվող բոլոր գործողությունների համար. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն իր թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության 32-40-րդ պարագրաֆներում[20], հստակեցնում է այս դրույթի մեկնաբանությունը. մասնավորապես, երեխայի լավագույն շահը համալիր հասկացություն է, և դրա բովանդակությունը պետք է սահմանվի անհատական գործի հիման վրա: Այն ճկուն է և ենթակա է ադապտացման: Երեխայի լավագույն շահը պետք է սահմանվի համապատասխան երեխայի կամ երեխաների խմբի կարգավիճակի լույսի ներքո: Անհրաժեշտ է իրազեկ լինել այս հասկացության ճկունության վտանգներին, որը, թույլ տալով արձագանքել երեխաների անհատական կարգավիճակին, կարող է նաև պետական մարմինների, ծնողների և մասնագետների կողմից չարաշահումների տեղիք տալ: Կոնվենցիայով սահմանված դրույթն այն մասին, որ երեխաների հետ կապված բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահը «պետք է» լինի առաջնային, պետությունների վրա դնում է իրավական պարտականություն: Այդ պարտականությունը պետությունները չեն կարող իրականացնել այնպիսի լայն հայեցողությամբ, որի շրջանակներում ցանկացած ձեռնարկվող միջոցի հետ կապված որոշվում է երեխայի լավագույն շահի առաջնահերթության համապատասխան կշիռը: «Առաջնահերթ ուշադրություն» ձևակերպումը նշանակում է, որ երեխայի լավագույն շահը չի կարող գտնվել մյուս հանգամանքների հետ միևնույն մակարդակում: Այս խիստ դիրքորոշումն արդարացվում է երեխայի հատուկ կարգավիճակով. կախվածություն, հասունություն, իրավական կարգավիճակ և հաճախ՝ ձայնագուրկ վիճակ: Երեխաները չափահասների համեմատությամբ ավելի քիչ հնարավորություն ունեն իրենց լավագույն շահը հիմնավորելու համար, հետևաբար նրանց վրա ազդող որոշումների կայացման մեջ ներգրավված անձինք պետք է լավագույնս տեղյակ լինեն նրանց շահերի մասին: Եթե երեխայի շահը չի շեշտադրվում, ապա նրանք անտեսվում են:

***Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների լավագույն շահը**: Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն իր թիվ 10 ընդհանուր մեկնաբանության 10-րդ պարագրաֆում ներկայացնում է, թե դատական համակարգն ինչու և ինչպես պետք է հաշվի առնի օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխայի լավագույն շահը որպես առաջնահերթություն. «Երեխաները տարբերվում են մեծահասակներից իրենց ֆիզիկական և հոգեկան զարգացվածությամբ, էմոցիոնալ և կրթական կարիքներով: Այս տարբերությունները հիմք են օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների առավել նվազ մեղավորության համար: Այս և այլ տարբերությունները հանդիսանում են անչափահասների մասնակցությամբ արդարադատության առանձին համակարգի անհրաժեշտության պատճառ և պահանջում են հատուկ*

[20] http://www.refworld.org/docid/51a84b5e4.html

վերաբերմունք երեխաների նկատմամբ: Երեխայի լավագույն շահի պաշտպանությունը նշանակում է, օրինակ, որ քրեական արդարադատության ավանդական նպատակները, ինչպիսիք են՝ ռեպրեսիան/հատուցումը, երեխաների մասնակցությամբ արդարադատություն իրականացնելիս պետք է փոխարինվեն վերականգնողական արդարադատությամբ: Սա կարող է իրականացվել հաշվի առնելով արդյունավետ հասարակական անվտանգությունը»[21]:

3. **Մասնակցություն**[22]: Այն երեխաները, ովքեր կարող են ձևավորել իրենց կարծիքը, իրավունք ունեն մասնակցել, միջամտել և ազատորեն արտահայտել իրենց կարծիքը իրենց վերաբերյալ բոլոր դատական և վարչական գործընթացներում: Նրանց կարծիքին պետք է պատշաճ կշիռ տրվի նրանց տարիքին և հասունությանը համապատասխան: Նրանք կարող են մասնակցելու վերաբերյալ որոշում կայացնել: Մասնակցության դեպքում նրանք դա կարող են իրականացնել ուղղակիորեն կամ ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ներպետական օրենսդրության ընթացակարգային նորմերով սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում, դատարանը կամ այլ պաշտոնատար անձ կարող է ներգրավել հոգեբան կամ այլ մասնագետ՝ երեխայի կարծիքներն ու կարիքներն ավելի լավ հասկանալու համար, և ապահովելու համար, որ երեխան հասկանա վարույթն ու տեղեկատվությունը իր համար հասանելի կերպով:

Եթե երեխաները տարիքով շատ փոքր են և ոչ հասուն իրենց կարծիքը ձևավորելու համար, ապա նրանց լավագույն շահը վեր հանելու և իրավունքները պաշտպանելու համար պետք է ներգրավվեն անկախ ներկայացուցիչներ (դատարանի կողմից նշանակված իրավաբաններ կամ այլ ներկայացուցիչներ):

Համապատասխան մասնակցություն ունենալու համար երեխաները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ ողջ տեղեկատվությամբ: Որոշումներ կայացնելիս դրանք պետք է բացատրվեն երեխաներին իրենց համար ընկալելի լեզվով, մասնավորապես, երբ դրանք հակասում են նրանց արտահայտած կարծիքին կամ ցանկություններին:

Միջավայրը, որտեղ երեխաներն իրականացնում են իրենց մասնակցության իրավունքը, պետք է լինի խրախուսող, որպեսզի նրանք կարողանան վստահ լինել, որ գործընթացների համար պատասխանատու մեծահասակները ցանկանում են լսել իրենց կարծիքները և լուրջ են վերաբերում դրանց:

Հարցաքննության սենյակները և սպասասրահները պետք է հարմարեցված լինեն երեխաների համար բարենպաստ միջավայրի ձևավորման պահանջներին:

[21] http://www.refworld.org/docid/4670fca12.html

[22] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 2.3.1-2.3.4 կետեր, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

Մեկնաբանություն

<u>Լսված լինելու և մասնակցության իրավունք:</u> Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է երեխայի՝ լսված լինելու և կարծիք արտահայտելու իրավունքը: Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Երեխայի լսված լինելու իրավունքի մասին թիվ 12 ընդհանուր մեկնաբանության համաձայն (3-րդ և 13-րդ պարագրաֆներ)[23], մասնակցության հասկացությունը որոշակի զարգացում է ապրել տարիների ընթացքում. «1989թ. Կոնվենցիայի ընդունումից հետո 12-րդ հոդվածի իրականացմանընպաստող օրենսդրության, քաղաքականությունների և մեթոդաբանության զարգացումը տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում նշանակալի զարգացում է ապրել:

Վերջին տարիներին լայնատարած պրակտիկա է ձևավորվել, որը լայնորեն կոնցեպտուալիզացվել է որպես «մասնակցություն», թեև այս եզրույթն ինքնին արտացոլված չէ 12-րդ հոդվածի տեքստում: Այս եզրույթը զարգացել է և ներկայումս լայնորեն կիրառվում է նկարագրելու համար ընթացիկ գործընթացները, որոնք ներառում են տեղեկատվության տրամադրումը և երեխաների ու մեծահասակների միջև երկխոսությունը՝ հիմնված փոխադարձ հարգանքի վրա, որի ընթացքում երեխաները կարող են սովորել, թե ինչպես իրենց և մեծահասակների տեսակետները կարող են հաշվի առնվել և ձևավորել այդպիսի գործընթացների վերջնարդյունքը»: «Այս գործընթացները սովորաբար կոչվում են մասնակցություն: Երեխայի կամ երեխաների լսված լինելու իրավունքը այս գործընթացների էական տարրն է: Մասնակցության գաղափարը ընդգծում է, որ երեխաների ներգրավումը չպետք է լինի պահի հետ կապված գործողություն, այլ պետք է լինի մեկնարկային կետ երեխաների և մեծահասակների միջև քաղաքականությունների, ծրագրերի և միջոցների զարգացման վերաբերյալ ինտենսիվ փոխանակման համար՝ երեխաների կյանքի համապատասխան համատեքստում»: Հետևաբար, լսված լինելու իրավունքը մասնակցելու իրավունքի մի բաղադրիչն է:

<u>Մասնակցելու և տեղեկացված լինելու իրավունք:</u> Մասնակցելու իրավունքը կապված է մի շարք այլ իրավունքների հետ: Խիստ կարևոր է կապը տեղեկացված լինելու իրավունքի հետ: Տեղեկացված լինելը կարևոր նախադրյալ է երեխաների՝ իրենց մասնակցության վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու կարողության համար: Մասնավորապես, երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների, վարույթների (ներառյալ դրանցում իրենց տեղի և դերի), իրենց համար վարույթների հնարավոր արդյունքների և հետևանքների, ուղղակի կամ ներկայացուցչի միջոցով հաղորդակցության տարբերակների, օգնություն և աջակցություն տրամադրող ծառայությունների առկայության և որոշումների վերանայման հնարավորության մասին:

<u>Երեխաների կարծիքին պատշաճ կշիռ տալը՝ իրենց տարիքին և հասունությանը համապատասխան:</u> Երեխաների կարծիքին պետք է տրվի պատշաճ կշիռ՝ իրենց տարիքին և հասունությանը համապատասխան: Այս գնահատականը չի կարող տրվել միայն տարիքի հիման վրա. երեխայի հասունությունը պետք է գնահատվի անհատական դեպքի հիման վրա՝ տեսնելու համար, թե երեխան որքանով է ունակ ձևավորել իր սեփական կարծիքը, և այնուհետև սահմանել այն կշիռը, որը պետք է տրվի այդ կարծիքին: Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված

[23] http://www.refworld.org/docid/4ae562c52.html

արդարադատության ուղենիշների համաձայն, երեխաների համար իրենց կարծիքը ձևավորելու կարողությունը «պետք է դիտարկվի ոչ թե որպես սահմանափակում, այլ պարտականություն իշխանությունների համար: Երեխայի՝ իր կարծիքը ձևավորելու անկարողության վերաբերյալ հեշտությամբ գնահատական տալու փոխարեն պետությունները պետք է ենթադրեն, որ երեխան փաստացիորեն ունի այս կարողությունը: Երեխան չէ, որ պետք է դա ապացուցի: Այստեղ ընդգծվում է այն հիմնական գաղափարը, որ երեխաները իրավունքի կրողներ են»[24]:

<u>Մասնակցությունը որպես իրավունք, և ոչ թե պարտականություն:</u> Մասնակցելու և լսված լինելու իրավունքը պարտականություն չէ: Իրենց կարծիքը ձևավորելու ունակ երեխաները ազատ են որոշում կայացնել վարույթին իրենց մասնակցության վերաբերյալ: Որևէ ոչ պատշաճ ճնշում չպետք է կիրառվի նրանց նկատմամբ այդ առումով:

<u>Երեխաների մասնակցությունը խրախուսող վերաբերմունք և միջավայր:</u> Միջավայրի, ինչպես նաև վարքագծի տարրերը կարող են խրախուսել երեխաների մասնակցությունը: Մեծահասակները պետք է երեխաներին փոխանցեն այն հաղորդագրությունը, որ վարույթին նրանց նպաստը ողջունելի է և դրան լուրջ են վերաբերում: Նրանք պետք է զգան, որ իրենք անվտանգ միջավայրում են, և առկա է հարգանք իրենց անձի նկատմամբ: Հարցերը և այլ միջամտությունները պետք է լինեն դյուրըմբռնելի լեզվով և այնպիսի տեմպով, որին երեխան կարող է հետևել, հաշվի առնելով երեխայի տարիքն ու հասունությունը: Երեխա վկաների խաչաձև հարցաքննությունը պետք է լինի երեխայի կարիքներին համապատասխան, և չպետք է լինի միջամտող և թշնամական[25]: Ինչպես նշել է Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողովն իր թիվ 12 ընդհանուր մեկնաբանությունում[26], «երեխայի լսված լինելու իրավունքը չի կարող արդյունավետ կերպով իրականացվել իր տարիքին ոչ համապատասխան, թշնամական, լարված և վախեցնող միջավայրում:

Անչափահասների 6%-ը նշել է, որ ՁՊՎ–ներում գտնվելու ընթացքում նրանք ենթարկվել են նվաստացուցիչ վերաբերմունքի:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի երեխայի համար հասանելի տեղեկատվության տրամադրմանը և ապահովմանը, ինքնապաշտպանության համար համապատասխան աջակցությանը, համապատասխան վերապատրաստում անցած անձնակազմին, դատարանի նիստերի դահլիճի, դատավորների և իրավաբանների հանդերձանքին, տեսողական էկրանին և առանձին սպասասրահներին» (պարագրաֆ 34): "Երեխան չպետք է հաճախ հարցաքննվի առանց անհրաժեշտության, մասնավորապես, երբ տեղի են ունեցել վնասակար իրադարձություններ: Երեխային «լսելը» դժվար գործընթաց է, որը կարող է տրավմատիկ ազդեցություն ունենալ երեխայի վրա» (պարագրաֆ 24)[27]:

---

[24] https://rm.coe.int/16804b2cf3, պարագրաֆ 33, ԵԽ Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշների բացատրական զեկույց

[25] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, էջ 17, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[26] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf

[27] Աղյուսակում ներկայացված վիճակագրության աղբյուրը՝
Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն անչափահասների արդարադատության համատեքստում, http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/torture-report-arm.pdf

4. **Արժանապատվություն:** Արդարադատության հետ շփումներում երեխաները պետք է արժանանան հարգալից, հոգատար, զգայուն և արդար վերաբերմունքի, անկախ նրանց իրավական կարգավիճակից և այն պատճառներից, որոնք հիմք են հանդիսացել արդադատության մեջ ներգրավվածության համար: Երեխաները չպետք է խոշտանգվեն կամ ենթարկվեն անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի[28]:

Մեկնաբանություն

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի պրեամբուլայի առաջին երկու պարագրաֆներն ընդգծում են արժանապատվության կարևորությունը. «համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների համաձայն, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է՝ հաշվի առնելով, որ Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնարար իրավունքների և մարդկային անհատի արժանապատվության ու արժեքի նկատմամբ ու վճռել են քաջալերել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը առավել ազատության պայմաններում,…»[29]:

Երեխաներն իրավունք ունեն արժանանալ արժանապատիվ վերաբերմունքի, ինչպես մյուս բոլոր մարդիկ: Արժանապատիվ վերաբերմունքը բարեգործական գործողություն չէ: Դա յուրաքանչյուր մարդու իրավունքն է, ինչպես և երեխաների ու այլ անձանց համար սահմանված մյուս իրավունքները: Ավելին, արժանապատիվ վերաբերմունքի արժանանալը կարևոր է այլ անձանց արժանապատիվ վերաբերվելու համար: Երեխաների նկատմամբ արժանապատիվ վերաբերմունք դրսևորելիս արդարադատության և այլ պաշտոնյաները նպաստում են նրանց կրթությանը:

5. **Խտրականության բացառում:** Արդարադատության հետ առնչվող յուրաքանչյուր երեխա պետք է արժանանա հավասար, ոչ խտրական վերաբերմունքի՝ անկախ նրանց կամ նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների ռասսայից, գույնից, սեռից, սեռական կողմնորոշումից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ կարծիքից, ազգային, էթնիկ և սոցիալական ծագումից, միգրացիոն կամ փախստականի կարգավիճակից, ընտանեկան դրությունից, սոցիալ-

[28] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, կետ III C, https://rm.coe.int/16804b2cf3

[29] http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf

տնտեսական դրությունից, հաշմանդամությունից, ծնունդից կամ այլ կարգավիճակից: Երեխաները պետք է պաշտպանված լինեն խտրականության կամ պատժի բոլոր ձևերից՝ իրենց ծնողների, օրինական ներկայացուցիչների կամ ընտանիքի անդամների կարգավիճակի, գործողությունների, արտահայտած կարծիքների կամ դավանանքի հիմքով[30]:

Մեկնաբանություն

Բոլոր երեխաները պետք է արժանանան հավասար վերաբերմունքի, և ինչպես նշել է Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն՝ «Հատուկ ուշադրություն պետք է դարձնել de facto խտրականությանը և տարբերություններին, որոնք կարող են լինել համապատասխան քաղաքականության բացակայության արդյունք և ներառել երեխաների խոցելի խմբերին, ինչպիսիք են թափառաշրջիկ երեխաները, ռասսայական, էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող երեխաները, բնիկ ժողովուրդներին պատկանող երեխաները, աղջիկ երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները և օրենքը հաճախակի խախտող երեխաները[31]»:

[30] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, կետ III D, https://rm.coe.int/16804b2cf3

[31] Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն, պարագրաֆ 6

ՄԱՍ 2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների «հիմնական տարրերը» այն տարրերն են, որոնք կիրառելի են դատավարական գործընթացների բոլոր (նախքան դատաքննությունը, դատաքննության ընթացքում և դատաքննությունից հետո) փուլերում[32]: Այդ տարրերն են՝

Ոստիկանության հետ առնչություն ունեցած անչափահասների 45%-ը չի կարողացել ասել, թե ով է իրեն ձերբակալել կամ բերման ենթարկել:

1. տեղեկատվություն և խորհրդատվություն,
2. արդար դատավարական գործընթացի երաշխիքներ,
3. իրավական օգնություն և ներկայացուցչություն,
4. երեխաների ընկալմանն ու միջավայրին հարմարեցված վարույթի կազմակերպում,
5. ընտանիքի ներգրավվածությունը դատական գործընթացներին,
6. թարգմանչի և այլ միջնորդների աջակցություն,
7. ազատությունից զրկում,
8. իրավախախտում կատարած երեխաների տարիքը,
9. կարգավիճակի հետ կապված իրավախախտումներ,
10. մասնավոր կյանքի պաշտպանություն,
11. դատավարական գործընթացների ձգձգումներ և առաջնահերթություն,
12. բազմաճյուղային և միջճյուղային մոտեցում,
13. մասնագիտացում, ընտրություն և վերապատրաստում:

2.1. Տեղեկատվություն և խորհրդատվություն

Տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու պարտականություն: Արդարադատական և այլ մարմինների (ինչպիսիք են՝ ոստիկանությունը, միգրացիոն, կրթական, սոցիալական և առողջապահական ծառայությունները) կողմից ներգրավման առաջին իսկ պահից սկսած՝ երեխաներին պետք է պատշաճ կերպով տրամադրվի տեղեկատվություն և խորհրդատվություն իրենց կարգավիճակի (վկա, տուժող, ենթադրյալ իրավախախտ, հայցվոր կամ այլ) վերաբերյալ: Սա պետք է իրականացվի երեխայի տարիքին, հասունությանը, կարողություններին, սեռին և մշակույթին համապատասխան ձևով և լեզվով: Տեղեկատվությունն ու խորհրդատվությունը

[32] Աղյուսակում ներկայացված վիճակագրության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն անչափահասների արդարադատության համատեքստում, http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/torture-report-arm.pdf

պետք է տրամադրվի տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են, ի թիվս այլոց, երեխայի իրավունքները և դրանց իրականացման ու պաշտպանության եղանակները, դատական համակարգը, դատական և արտադատական վարույթը, ներառյալ երեխայի տեղը և դերը, ինչպես նաև նրա համար վարույթի հնարավոր արդյունքներն ու հետևանքները, երեխային ներկայացվող մեղադրանքը, նրան օգնություն և աջակցություն տրամադրող ծառայությունների առկայությունը, կայացված որոշումների վերանայման հնարավորությունը: Որպես կանոն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի նաև ծնողներին և օրինական ներկայացուցիչներին: Եթե օրենքով այդպիսի տեղեկատվության տրամադրումը պարտադիր չէ, ապա այն երեխային, նրա ծնողներին և օրինական ներկայացուցիչներին կարող է չտրամադրվել, եթե դա կարող է վնասել երեխային:

Մեկնաբանություն[33]:

Երեխաների՝ դատավարական գործընթացներին մասնակցելու և իրենց իրավունքներն իրականացնելու կարողությունը կախված է դատավարական գործընթացի, դատարանի և այլ ծառայությունների գործունեության, և դրանցում իրենց դերի ու տեղի վերաբերյալ նրանց գիտելիքից և ընկալումից: Իրենց իրավունքների մասին չիրազեկված և դրանց էությունը չիմացող անձինք չենք կարող պաշտպանել դրանք: Նրանք նույն կարգավիճակում են, ինչ որևէ իրավունք չունեցող անձը: Հետևաբար, կարևոր է պատշաճ կերպով տեղեկացնել երեխաներին իրենց իրավունքների, դատավարական գործընթացների, ինչպես նաև տարբեր պաշտոնյաների ու ներկայացուցիչների դերերի, և նրանց հետ իրենց համագործակցության գործընթացում իրենց դերի մասին:

Ոստիկանության հետ առնչություն ունեցած անչափահասների գրեթե մեկ քառորդը (21%) չի տեղեկացվել իրեն ձերբակալելու կամ բերման ենթարկելու պատճառների մասին:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան վերահաստատում է, որ մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխա պետք է «(ii) անհապաղ և անմիջականորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ծնողների կամ օրինական խնամակալների միջոցով տեղեկացվի իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին և ստանա իրավաբանական կամ այլ համապատասխան օգնություն՝ իր պաշտպանությունը նախապատրաստելիս և իրականացնելիս»[34]:

Անչափահասների գրեթե կեսը (42%) չի կարդացել ձերբակալության արձանագրությունը այն ստորագրելուց առաջ՝ շփոթմունքի, մտածելու անկարողության, վատ զգալու և այլ պատճառներով:

[33] Աղյուսակում ներկայացված վիճակագրության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն անչափահասների արդարադատության համատեքստում, http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/torture-report-arm.pdf

[34] Հոդված 40, պարագրաֆ 2(բ)

Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշները սահմանում են այն հարցերի ոչ սպառիչ ցանկը, որոնց վերաբերյալ երեխաներին և նրանց ծնողներին պետք է տրամադրվի պատշաճ և համապատասխան տեղեկատվություն, մասնավորապես.

1. *իրենց իրավունքները, մասնավորապես, այն հատուկ իրավունքները, որոնք երեխաներն ունեն կապված դատական կամ ոչ դատական գործընթացների հետ, որտեղ նրանք ընդգրկված են կամ կարող են ընդգրկված լինել, ինչպես նաև իրենց իրավունքները խախտումներից պաշտպանելու առկա հնարավոր միջոցները, ներառյալ դատական կամ ոչ դատական գործընթացներին կամ այլ միջամտություններին դիմելու հնարավորությունը: Սա կարող է ներառել տեղեկատվություն գործընթացների հնարավոր տևողության, բողոքարկման և անկախ գանգատարկման մեխանիզմների հնարավոր հասանելիության վերաբերյալ,*
2. *համակարգը և գործընթացները, հաշվի առնելով երեխայի հատուկ տեղը և հնարավոր դերը դրանցում և տարբեր ընթացակարգային քայլերը,*
3. *երեխայի համար հասանելի աջակցող մեխանիզմները, երբ նա մասնակցում է դատական կամ ոչ դատական գործընթացներին,*
4. *կոնկրետ դատական կամ արտադատական գործընթացների համապատասխանությունը և հնարավոր հետևանքները,*
5. *մեղադրանքը կամ իրենց գանգատին տրվող արձագանքը, եթե կիրառելի է,*
6. *դատավարական գործընթացների և այլ համապատասխան միջոցառումների տեղը և ժամը, ինչպիսիք են՝ նիստերը, եթե շոշափվում են երեխայի անձնական շահերը,*
7. *գործընթացների կամ միջամտությունների ընդհանուր առաջընթացը և վերջնարդյունքը,*
8. *պաշտպանող միջոցների առկայությունը, երեխայի համար հետևանք առաջացնող որոշումների վերանայման առկա մեխանիզմները,*
9. *իրավախախտից կամ պետությունից հատուցում ստանալու առկա հնարավորությունները՝ արդարադատության գործընթացի, այլընտրանքային քաղաքացիական վարույթի կամ այլ գործընթացների միջոցով,*
10. *ծառայությունների (առողջապահական, հոգեբանական, սոցիալական, թարգմանչական ու մեկնաբանող և այլ) և կազմակերպությունների հասանելիությունը, որոնք կարող են տրամադրել աջակցություն, ինչպես նաև այդ ծառայություններից օգտվելու միջոցները, ներառյալ արտակարգ ֆինանսական օժանդակությունը, եթե կիրառելի է,*
11. *որևէ հատուկ կարգավորում, որը հասանելի է նրանց լավագույն շահի պաշտպանության համար, եթե նրանք բնակվում են այլ պետությունում»*[35]*:*

[35] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, Բաժին 1. Տեղեկատվություն և խորհրդատվություն, https://rm.coe.int/16804b2cf3

Տուժող հանդիսացող երեխաները մյուսներից առավել շատ կարիք ունեն տեղեկատվության ու խորհրդատվության առ այն, թե ինչպես ստանալ հոգեբանական-սոցիալական վերաբերմունք և աջակցություն, հատուցում, վերականգնում և ուղղում: Տեղեկատվությունից բացի, երեխան կարիք ունի խորհրդատվության, որը պետք է տրամադրվի համապատասխան գիտելիք ունեցող անձանց կողմից, ովքեր չունեն շահերի բախում երեխայի հետ և կարող են գործել նրանց լավագույն շահի համար:

Դատավարական գործընթացներին տուժող եւ վկա հանդիսացող անչափահասների ներգրավումն առանց հոգեբանի աջակցության հակասում է ՄԱԿ-ի Տուժող և վկա հանդիսացող երեխաների ներգրավմամբ արդարադատության վերաբերյալ ուղեցույցի 22-րդ պարագրաֆին:

2.2. Արդար դատավարական գործընթացի երաշխիքներ

Արդար վարույթի երաշխիքները ներառում են մի շարք ընթացակարգային կանոններ, որոնք միտված են ապահովելու, որ տվյալ գործով յուրաքանչյուր կողմի նկատմամբ դրսևորվի արդարացի վերաբերմունք: Քրեական վարույթում դրանք ներառում են այսպես կոչված պաշտպանական իրավունքները: Այս երաշխիքները հավասարապես կիրառելի են միջամտության և դատավարական գործընթացների այլ տեսակների դեպքում, ինչպիսիք են քաղաքացիական, երեխաների պաշտպանության և վարչական իրավունքի ընթացակարգերը:

Իրավական գործընթացներում ներգրավված երեխաների համար սահմանված առավել կարևոր երաշխիքների շարքում առանձնացվում են.

1. երեխաների իրավունքը ստանալու իրենց արժանապատվության ու նշանակալիության գիտակցմանը նպաստող վերաբերմունք,
2. հետադարձ ուժ ունեցող օրենքով չդատվելու իրավունքը, ներառյալ երեխայի իրավունքը չմեղադրվելու կամ չճանաչվելու որպես քրեական օրենսդրությունը խախտող այն գործողությունների կամ անգործության պատճառով, որոնք դրանք կատարելու պահին արգելված չեն եղել ներպետական կամ միջազգային իրավունքով,
3. անմեղ համարվելու իրավունքը, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքի համաձայն,
4. դատավարական գործընթացներին մասնակցելու իրավունքը, ներառյալ լսված լինելու և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու իրավունքը,

Ձերբակալված երեխաները անհապաղ պետք է տեղեկացվեն իրենց ձերբակալման պատճառների մասին՝ իրենց տարիքին և ընկալման մակարդակին համապատասխան

5. իրավաբանական կամ այլ համապատասխան օգնություն ստանալու և ներկայացված լինելու իրավունքը իրենց գործի նախապատրաստման և ներկայացման համար,
6. իրավասու անկախ և անկողմնակալ դատական կամ պետական մարմնի կողմից առանց ձգձգումների իր գործի քննության իրավունք արդար լսումների գործընթացի միջոցով՝ օրենքի համաձայն,
7. ներկայացված մեղադրանքի կամ իրենց նկատմամբ միջամտության պատճառների վերաբերյալ պատշաճ կերպով և ուղղակիորեն տեղեկացվելու իրավունք,
8. վկայություն տալուն չհարկադրվելու կամ մեղքը խոստովանելուն չհարկադրվելու իրավունք,
9. ինքնուրույն կամ այլ անձանց օգնությամբ մեղադրող կողմի վկաներին հարցաքննելու իրավունք և հավասարության պայմաններում պաշտպանության կողմի վկաների մասնակցությունը և նրանց հարցաքննությունը ապահովելու իրավունք,
10. թարգմանչի անվճար օգնություն ստանալու իրավունք, եթե առկա է անհրաժեշտություն,
11. որոշումների վերանայման իրավունք վերադաս իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից,
12. անձնական կյանքի լիարժեք հարգանքի իրավունք դատավարական գործընթացի բոլոր փուլերում[36]:

Մեկնաբանություն:

Իրավական գործընթացներում ներգրավված երեխաներին տրված վերոթվարկյալ իրավունքները ունեն մեծ կարևորություն, և չեն կարող մերժվել երեխայի լավագույն շահի նկատառումներից ելնելով: Ինչպես նշված է Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներում, «Պատշաճ ընթացակարգի տարրերը, ինչպիսիք են օրինականության և համաչափության սկզբունքները, անմեղության կանխավարկածը, արդար դատաքննության իրավունքը, իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունքը, դատարանի մատչելիության և բողոքարկման իրավունքը, պետք է երաշխավորվեն երեխաների համար այնպես, ինչպես չափահասների համար և չպետք է նվազեցվեն կամ մերժվեն երեխայի լավագույն շահի ենթատեքստում: Սա կիրառելի է բոլոր դատական և ոչ դատական ու վարչական գործընթացների նկատմամբ»[37]:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը սահմանում է օրենքի հետ խնդիրներ ունեցող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է

[36] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 3.2.1-3.2.2 կետեր, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[37] Բաժին Ե, պարագրաֆ 2

նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, և երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և այլոց հիմնարար ազատությունների նկատմամբ: Այլ կերպ ասած, արդարադատության ոլորտի մասնագետների համար էական է հարգանք ցուցաբերել երեխաների նկատմամբ, եթե նրանք փորձում են նրանց սովորեցնել հարգել մյուսներին: Այլոց նկատմամբ հարգանքը պետք է ուսուցանվի օրինակի միջոցով: Այս կրթող դերը վերաբերում է ոչ միայն այն մասնագետներին, ովքեր աշխատում են իրավախախտ երեխաների հետ, այլև արդարադատության համակարգի բոլոր աշխատակիցներին, ում հետ երեխաները շփվում են:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի ա կետի համաձայն ոչ մի երեխա չպետք է մեղադրվի կամ ճանաչվի որպես քրեական օրենադրությունը խախտող այն գործողությունների կամ անգործության պատճառով, որոնք դրանք կատարելու պահին արգելված չեն եղել ներպետական կամ միջազգային իրավունքով: Անհրաժեշտ է հավելել, որ չի կարող սահմանվել ավելի ծանր պատասխանատվության միջոց, քան իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը: Սակայն, եթե իրավախախտումը կատարելուց հետո ընդունված ակտը սահմանում է ավելի մեղմ պատիժ, ապա դա պետք է տարածվի նաև երեխայի վրա[38]:

Անմեղության կանխավարկածը պաշտպանության հիմնարար իրավունք է: Մեղադրող կողմի պարտականությունն է ներկայացնել ողջամիտ կասկածից վեր ապացույցներ առ այն, որ երեխան կատարել է այդ իրավախախտումը: Եթե առկա է որևէ ողջամիտ կասկած երեխայի մեղքի վերաբերյալ, ապա երեխան պետք է արդարացվի, նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրող կողմի ապացույցներն ավելի ուժեղ են, քան պաշտպանության կողմի ապացույցները: Կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ երեխայի, ինչպես և ցանկացած մեղադրյալի դեպքում:

Անմեղության կանխավարկածի հետևանքներից մեկն այն է, որ օրենքի հետ խնդիր ունեցող երեխաները, ինչպես և մեծահասակները, չեն կարող հարկադրվել վկայություն տալու կամ ինքնախոստովանական ցուցմունքներ տալու առումով: Սա կիրառելի է մինչև դատարանի կողմից մեղավոր ճանաչվելը՝ դատավարության բոլոր փուլերում, ներառյալ ոստիկանության հետաքննությունը, մեղքի ընդունման կամ չընդունման ընտրությունը և դատաքննությունը: Անմեղության կանխավարկածի հետևանքն այն է, որ երեխայի մեղավորության ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը: Երեխաներին չպետք է հարկադրել օգնելու դատախազին՝ իրենց մեղքի ապացուցման առումով: Երեխաներն իրավունք ունեն չընդունել իրենց մեղքը, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք գիտեն, որ կատարել են այդ իրավախախտումը:

Երեխաների՝ իրենց ներկայացված մեղադրանքի վերաբերյալ պատշաճ և ուղղակի տեղեկատվություն ստանալու իրավունքը հիմնարար պահանջ է, որը հնարավորություն է տալիս երեխաներին պատրաստել իրենց պաշտպանությունը: Սա տեղեկատվություն ստանալու նրանց իրավունքի էական տարր է, որն ինքնին հանդիսանում է դատավարություններին նրանց մասնակցության նախադրյալ:

Երեխաներն իրավունք ունեն ինքնուրույն կամ այլ անձանց օգնությամբ հարցաքննելու մեղադրող կողմի վկաներին և հավասարության պայմաններում ապահովելու պաշտպանության կողմի վկաների մասնակցությունը և նրանց հարցաքննությունը: Սա հանդիսանում է դատավարական գործընթացներին արդյունավետ մասնակցության իրավունքի հիմնարար տարրերից մեկը: Քրեական

[38] Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանություն, պարագրաֆ 4.1

դատավարություններում ներկայացված ապացույցները հիմնականում ներկայացվում են վկաների կողմից, որոնք հրավիրվում են կողմերի կողմից և կարող են հարցաքննվել նաև հակառակ կողմի կողմից: Արդար դատավարական գործընթացը պահանջում է, որ այս իրավունքը տրվի հավասարապես բոլոր կողմերին, այդ թվում նաև՝ երեխաներին:

Օրենքով սահմանված կարգով արդար լսումներ ապահովող իրավասու անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատական մարմնի մատչելիությունը երեխաների համար նույնքան կարևոր է, որքան մեծահասակների համար: Երեխաների համար առկա հատուկ խոչընդոտները պետք է վերացվեն: Երեխաներն իրենց պաշտպանելու համար չունեն նույն իրավական կարողություններն ու ունակությունները, ինչպիսիք ունեն մեծահասակները: Նրանք կախված են մեծահասակներից (ինչպիսիք են՝ ծնողները, ընտանիքի այլ անդամները, արդարադատության և սոցիալական ծառայության տարբեր միջամտող անձինք և այլն), որոնց հետ կարող են ունենալ շահերի բախում: Պետությունները պետք է վերացնեն երեխաների գործերը քննող և համապատասխան որոշում կայացնող պետական մարմինների և երեխաների միջև առկա խոչընդոտները[39]*:*

2.3. Իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն[40]

Արդարադատության հետ շփումներում երեխաներին պետք է տրամադրվի հասանելի իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն, եթե շոշափվում են նրանց շահերը: Եթե առկա է կամ կարող է առկա լինել շահերի բախում երեխաների և նրանց ծնողների կամ այլ կողմի շահերի միջև, ապա երեխաները պետք է ունենան իրենց սեփական խորհրդատուն և ներկայացուցիչը, ով հանդես է գալիս իրենց անունից[41]:

Հարցված անչափահասների 56%-ը մինչև հարցաքննությունը հնարավորություն են ունեցել խոսելու փաստաբանի հետ, իսկ 37%-ը չեն ունեցել այդ հնարավորությունը:

Իրավաբանական օգնություն տրամադրող և ներկայացուցչություն իրականացնող անձինք երեխաների հանդեպ ունեն նույն պարտականությունները, ինչպիսիք սահմանված են մեծահասակների դեպքում: Այս պարտականությունները պետք է իրականացվեն երեխայի հաղորդակցության և ընկալման մակարդակի հետ համահունչ[42]: Մասնավորապես, իրավաբանական

[39] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 24-26 էջեր, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[40] Աղյուսակում ներկայացված վիճակագրության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն անչափահասների արդարադատության համատեքստում, http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/torture-report-arm.pdf

[41] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, կետ 37, https://rm.coe.int/16804b2cf3

[42] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, 38-39 կետեր, https://rm.coe.int/16804b2cf3

օգնություն ցուցաբերող և ներկայացուցչություն իրականացնող անձը պարտավոր է.

1. տրամադրել երեխաներին անհրաժեշտ տեղեկատվություն,
2. խորհուրդ տալ և ուղղորդել երեխաներին դատավարական գործընթացների ընթացքում,
3. երեխայի հետ խորհրդակցելուց հետո ներկայացնել վերջինիս տեսակետները դատարանում կամ այլ պետական մարմիններում,
4. ներկա գտնվել դատավարական գործընթացներում, ներառյալ ոստիկանության և այլ իրավակիրառ մարմինների կողմից հարցաքննությունների ժամանակ, եթե դա կիրառելի է:

Ի լրումն այս խիստ իրավական դերին, իրավաբանական խորհրդատվություն տրամադրող և ներկայացուցչություն իրականացնող անձինք պետք է իրազեկ լինեն երեխաների կարիքներին՝ ընդհանուր և հոգեբանական աջակցության առումով և նպաստեն այդ աջակցության տրամադրմանը:

Իրավաբանական խորհրդատվություն տրամադրող և ներկայացուցչություն իրականացնող անձինք իրենց պարտականությունները պետք է կատարեն դատավարական գործընթացների բոլոր փուլերում՝ ոստիկանության կամ այլ հարցաքննություն իրականացնող մարմնի կողմից հարցաքննության նախապատրաստումից մինչև երեխայի նկատմամբ սահմանված որևէ միջոցի կիրառումը:

Երեխաների և նրանց իրավաբանական խորհրդատվություն տրամադրող և ներկայացուցչություն իրականացնող անձանց միջև բանավոր կամ գրավոր հաղորդակցությունը պետք է իրականացվի այդպիսի հաղորդակցությունների լիարժեք գաղտնիության ապահովման պայմաններում: Իրավաբանական խորհրդատվություն տրամադրող և ներկայացուցչություն իրականացնող անձանց պետք է բավարար ժամանակ և միջոցներ տրվեն օգնելու համար երեխաներին՝ տվյալ գործով իրենց դերին համապատասխան (որպես տուժող, վկա, կասկածյալ կամ մեղադրյալ) նախապատրաստվելու համար:

Երեխաներին պետք է տրամադրվի անվճար իրավաբանական օգնություն: Այս դրույթը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ կարող է շահերի բախում լինել ծնողների և երեխաների միջև և այն իրավիճակներում, երբ երեխաները զրկված են կամ կարող են զրկվել ազատությունից կամ այլ պատճառով հեռու են ընտանիքից:

Իրավաբանները և այլ իրավական հարցերով օգնականները և ներկայացուցիչները, ովքեր աշխատում են երեխաների հետ, պետք է անցնեն

հատուկ վերապատրաստում և ունենան երեխաների իրավունքների և նրանց ընկալմանը համապատասխան հաղորդակցության վերաբերյալ գիտելիքներ[43]:

Մեկնաբանություն

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանության համաձայն օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների դեպքում երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիան «պահանջում է, որ երեխային տրամադրվի օգնություն, (որը ոչ բոլոր հանգամանքներում է, որ պետք է ունենա իրավաբանական բնույթ, սակայն պետք է լինի համապատասխան): Անդամ պետությունների հայեցողությանն է թողնված այս օգնության տրամադրումը սահմանելու հարցը, սակայն այն պետք է լինի անվճար: Կոմիտեն առաջարկում է անդամ պետություններին տրամադրել հնարավորինս որակյալ իրավաբանական օգնություն՝ փորձագետ իրավաբանների և հարակից այլ ճյուղերի մասնագետների կողմից: Այլ համապատասխան օգնությունը ևս հնարավոր է (օրինակ՝ սոցիալական աշխատողի կողմից), բայց օգնություն ցուցաբերող անձը պետք է ունենա բավարար գիտելիքներ ու անչափահասների մասնակցությամբ դատավարության տարբեր իրավական հարցերի վերաբերյալ ընկալում և պետք է վերապատրաստված լինի օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար»[44]:

Եթե երեխաների և նրանց ծնողների միջև առկա է պոտենցիալ շահերի բախում, ապա երեխային պետք է տրամադրվի իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն այն անձի կողմից, ով.

1. *գործում է նրա անունից,*
2. *չի տրամադրում իրավաբանական ծառայություններ նրա ծնողներին կամ նրանցից որևէ մեկին,*
3. *չի ընտրվել ծնողների կողմից և չի վարձատրվում նրանց կողմից[45]:*

Երեխային իրավական առումով օգնություն տրամադրող և նրան ներկայացնող անձը պետք է ունենա այնպիսի կարգավիճակ, որպեսզի կարողանա արտահայտել և պաշտպանել բացառապես երեխայի կարծիքը: Երեխաների և նրանց իրավաբանական օգնություն ցույց տվող և ներկայացնող անձի միջև հաղորդակցության գաղտնիությունը բացառիկ կարևորություն ունի արդար դատավարական գործընթացների համար: Անկախ այն հանգամանքից, թե երեխաներն ընդգրկված են այդ գործընթացներում որպես տուժողներ, վկաներ, հայցվորներ, կասկածյալներ, մեղադրյալներ կամ ունեն այլ կարգավիճակ, նրանց համար չի կարող ապահովվել պատշաճ օգնություն և ներկայացուցչություն առանց նրանց հաղորդակցությունների խիստ գաղտնիությունը երաշխավորելու[46]:

---

[43] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, կետ 3.3.2, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[44] Թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն, պարագրաֆ 49

[45] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշների բացատրական հուշագիր, պարագրաֆ 103, https://rm.coe.int/16804b2cf3

[46] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 28-29 էջեր, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

2.4 Երեխաների ընկալմանն ու միջավայրին հարմարեցված վարույթի կազմակերպում[47]

Դատավորները, մասնագետները և երեխաների հետ հաղորդակցվող այլ անձինք պետք է այդ հաղորդակցությունն իրականացնեն հարգալից և նրբանկատ ձևով: Նրանց միջամտությունները և որոշումները պետք է հաշվի առնեն երեխաների տարիքը, նրանց հատուկ կարիքները, հասունության և ընկալման մակարդակը և հաղորդակցման ցանկացած այլ դժվարությունները: Շփումը երեխաների հետ պետք է իրականացվի նրանց տարիքին և ընկալման մակարդակին համապատասխան լեզվով: Երեխաների հետ շփվող մեծահասակները պետք է համոզվեն, որ երեխաները հասկանում են դատավարական գործընթացը, և տեղեկատվությունը համապատասխանում է նրանց կարիքներին: Իրավաբանական փաստաթղթերը պետք է բացատրվեն երեխաներին նրանց համար հասկանալի լեզվով: Երեխայի ծնողների կամ իրավական ներկայացուցչի պարտականությունն այս առումով չի կարող նվազեցնել արդարադատական մարմինների՝ դատավորի, դատախազի, ոստիկանության և այլոց պարտականությունը՝ երեխայի կողմից համապատասխան փաստաթղթերի ընկալումը երաշխավորելու համար: Երեխայի ծնողներին այդ տեղեկատվության տրամադրումը չի կարող լինել տվյալ տեղեկատվությունը երեխային տրամադրելու այլընտրանք: Երկուսն էլ պետք է ստանան տեղեկատվությունը իրենց համար հասկանալի եղանակով:

> Սեռական շահագործման զոհ հանդիսացող իգական սեռի անչափահասների հետ աշխատում են կին մասնագետներ:

Ծնողներին պետք է թույլատրել ուղեկցել իրենց երեխաներին, եթե առկա չէ պատճառաբանված որոշում հակառակի վերաբերյալ: Նախքան վարույթի սկսելը երեխաներին պետք է ծանոթացնել դատարանի և այլ մարմինների կառուցվածքին և գործունեությանը, ներգրավված պաշտոնյաների ինքնությանը և դերին, ինչպես նաև վարույթի բնույթին:

Երեխաների կողմից ցուցմունք տալը պետք է իրականացվի նրանց համար նվազագույն սթրեսի պայմաններում: Երեխաները պետք է պաշտպանված լինեն թշնամական կամ վախեցնող հարցերից: Ձայնագրության և տեսագրության միջոցով կամ նախքան դատական նիստերը ձեռք բերված ցուցմունքները ընդունելի են: Հետաքննության պրակտիկան պետք է համապատասխանեցվի երեխաների և նրանց իրավունքների առավելագույն պաշտպանությանը առանց վտանգելու արդար դատավարության այլ կողմերի իրավունքները:

[47] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, բաժին 3.4, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

Դատարանում դատավարությունները պետք է համապատասխանեցվեն երեխաների տեմպին և ուշադրության կենտրոնացմանը: Նիստերը չպետք է չափազանց երկարատև լինեն: Որոշ երեխաներ կարող են ընդգրկված լինել մի քանի տեսակի վարույթներում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իրավական գործընթացը (օրինակ՝ երեխայի պաշտպանություն, քրեական և ընտանեկան ընթացակարգեր): Եթե դա կարող է իրականացվել առանց վտանգելու ներգրավված կողմերի իրավունքները, ապա այս վարույթները պետք է միացվեն՝ դրանք պարզեցնելու, ապացույցների, հարցաքննությունների և գնահատականների կրկնողությունից խուսափելու, և գործընթացներից յուրաքանչյուրում ընդունվող որոշումների միջև օպտիմալ համապատասխանություն ապահովելու նպատակով:

2.5. Ընտանիքի ներգրավվածությունը դատական գործընթացներին

Սովորական հանգամանքներում երեխաներն ունեն ծնողների ուղեկցության իրավունք դատավարական գործընթացների բոլոր փուլերում, ներառյալ ոստիկանության կամ այլ հետաքննող մարմնի կողմից հարցաքննությունը, ինչպես նաև դատական նիստերը: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել գործընթացներում երկու ծնողների ներկայությունն ու ներգրավվածությունն ապահովելու համար:

> Ծնողներից մեկի կողմից կատարված հանցագործությունից տուժած երեխայի օրինական ներկայացուցիչ նշանակելիս մյուս ծնողի շահերի բախումը հաշվի չառնելը չի բխում երեխայի լավագույն շահից:

Ծնողների ներգրավվածությունը կարող է նշանակալիորեն նպաստել այն խնդիրների լուծմանը, որոնց պատճառով երեխան կանգնել է դատարանի առջև: Ծնողները պետք է ներկա գտնվեն դատավարական գործընթացներում իրենց երեխաներին ընդհանուր և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար, եթե նրանց մասնակցությունը չի բացառվել դատարանի որոշմամբ՝ ելնելով երեխայի լավագույն շահից: Եթե կան լուրջ հիմքեր, ապա ծնողները չեն կարող օգտվել երեխային ուղեկցելու իրենց իրավունքից, և այդ դեպքում երեխային պետք է ուղեկցի այլ համապատասխան չափահաս անձը[48]:

Երեխաների վերաբերյալ որոշումները պետք է միտված լինեն նրանց ընտանեկան միջավայրում պահելուն: Եթե տեղափոխումն անհրաժեշտ է, ապա երեխաներին ընտանեկան միջավայր վերադարձնելը ի սկզբանե պետք է դիտարկվի որպես հիմնական նպատակ: Անհրաժեշտ է հնարավորություն տալ և

[48] Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, պարագրաֆ 3.5.1, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

խրախուսել այս երեխաներին կանոնավոր կապ պահպանել իրենց ծնողների, ընտանիքի անդամների և իրենց համար այլ կարևոր անձանց հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանափակումներ են սահմանված նրանց լավագույն շահից ելնելով[49]:

Բացառիկ դեպքերում, երբ երեխաների վերադարձը ընտանիք անհնար է, անհրաժեշտ է մշտապես ապահովել խնամքի, կայուն հարաբերությունների և կայուն կենսապայմանների շարունակականությունը:

Մեկնաբանություն

Ծնողները պատասխանատու են երեխաների կրթության համար: Նրանք պետք է մասնակցեն նրանց կյանքի կարևոր իրադարձություններին, ներառյալ արդարադատական համակարգի հետ նրանց շփումներին: Ի լրումն իրենց իրավաբանական պատասխանատվությանն ու պարտականություններին, որպես երեխաների առաջնային խնամակալներ, նրանք պետք է ներկա գտնվեն՝ երեխային հոգեբանական և էմոցիոնալ աջակցություն և օգնություն ցուցաբերելու համար: Նրանց դերը չպետք է շփոթել իրավաբանական հարցերով խորհրդատուի դերի հետ, և որոշ դեպքերում անհրաժեշտ է նրբանկատ լինել պոտենցիալ շահերի բախման առումով:

Արդարադատական մարմինների կողմից ծնողների աջակցությունից հրաժարվելը պետք է տեղի ունենա միայն որպես ծայրահեղ միջոց: Բոլոր ջանքերը պետք է գործադրվեն դատավարական գործընթացներում ներգրավված բոլոր երեխաներին ընտանեկան միջավայրում պահելու համար: Ծնողները պետք է դիտարկվեն որպես գործընթացի բոլոր մասնակից սուբյեկտների (միջամտողների) գործընկերներ: Որոշ ծնողներ կարող են աջակցության և օգնության կարիք ունենալ՝ իրենց դերը պատշաճ կերպով կատարելու համար: Անհրաժեշտության դեպքում այդպիսի օգնությունը պետք է տրամադրվի և ծնողների սոցիալական ու կրթական պոտենցիալը պետք է խրախուսվի: Ծնողները պետք է դիտարկվեն որպես իրենց երեխաների խնդիրների լուծման հիմնական դերակատարներ: Նրանց ընդգրկվածությունը պետք է խրախուսվի:

Միայն բացառիկ դեպքերում կարող է արդարացվել ծնողների՝ երեխային ուղեկցելու իրավունքի սահմանափակումը: Այդպիսի դեպք կարող է հանդիսանալ ծնողի և երեխայի միաժամանակյա ընդգրկվածությունը քրեական դատավարությանը, երբ երեխան հանդիսանում է իր ծնողի գործողությունների զոհը կամ երբ ծնողներն ունեն շահերի բախում իրենց երեխաների հետ[50]:

[49] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, պարագրաֆ 21 ա, https://rm.coe.int/16804b2cf3

[50] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 32-33 էջեր, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

2.6. Թարգմանչի և այլ միջնորդների աջակցություն[51]

Արդարադատության գործընթացներին ներգրավված երեխաները պետք է ունենան անվճար թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունք, եթե նրանք չեն կարող հասկանալ դատավարության լեզուն: Այս օգնությունը պետք է հասանելի լինի դատավարության բոլոր փուլերում: Նույն կերպ, հաղորդակցման դժվարություններ կամ այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին դատավարության բոլոր փուլերում պետք է տրամադրվի պատշաճ և արդյունավետ օգնություն վերապատրաստված մասնագետների (օրինակ՝ ժեստերի լեզվի մասնագետի) կողմից:

Մեկնաբանություն

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն կոնվենցիայի անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխա ունենա թարգմանչի անվճար օգնություն ստանալու իրավունք, եթե երեխան չի հասկանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով[52]: Այս պահանջը կիրառելի է բոլոր տեսակի դատավարական գործընթացների նկատմամբ, ներառյալ՝ երեխայի բարեկեցության և պաշտպանության հետ կապված վարույթները: Օգնությունը չպետք է սահմանափակվի միայն դատական նիստերով և պետք է հասանելի լինի նաև գործընթացի այլ փուլերում (ոստիկանություն, սոցիալական գնահատականներ և այլն):

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 9 Ընդհանուր մեկնաբանության համաձայն «օրենքի հետ խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հարցաքննվի՝ համապատասխան լեզուների օգտագործմամբ և այնպիսի մասնագետների (ոստիկանության աշխատակիցների, փաստաբանների, սոցիալական աշխատողների, դատախազների և/կամ դատավորների) կողմից, ովքեր դրա հետ կապված անցել են համապատասխան վերապատրաստում»[53]: Այս պահանջը ընդգծում է ոչ միայն թարգմանիչների, այլև հաղորդակցման այլ մասնագետների կարևորությունը: Այս պահանջը չպետք է սահմանափակվի միայն օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաներով, այլև պետք է տարածվի արդարադատության համակարգի հետ առնչություններ ունեցող բոլոր երեխաների վրա, և գործի դատավարական գործընթացների բոլոր փուլերում:

2.7 Ազատությունից զրկում

Երեխային ազատությունից զրկելու ցանկացած տեսակ պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, ամենակարճ ժամկետով և միայն լուրջ դեպքերի

Երեխաների մինչդատական կալանքը օգտագործվում է որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամկետով

[51] Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն, պարագրաֆներ 62-63, http://www.refworld.org/docid/4670fca12.html

[52] Հոդված 40, մաս 2, կետ b(vi)

[53] Թիվ 9 ընդհանուր մեկնաբանություն, պարագրաֆ 74a

համար[54]: Ինչպես և մյուս միջոցները, ազատարգրկման հետ կապված միջոցները ևս պետք է նպատակաուղղված լինեն երեխաների սոցիալական ինտեգրմանը և վերականգնմանը: Անհրաժեշտ է մշակել և օգտագործել այլընտրանքային միջոցներ՝ ազատազրկումից խուսափելու և երեխաներին իրենց ընտանիքում և համայնքում մնալու հնարավորություն տալու նպատակով: Դրանք կարող են իրականացվել տարբեր ձևերով, ինչպես օրինակ՝ խորհրդակցություն, հոգեբանական-սոցիալական ուղղորդում և վերահսկողություն, օգնություն և աջակցություն երեխային և ընտանիքին, հատուկ պայմաններով ազատում, պրոբացիա և այլն: Վաղաժամկետ ազատումը՝ որոշակի պայմաններով կամ առանց դրանց, պետք է քննարկվի հնարավորինս շուտ: Ազատությունից զրկված երեխաների՝ ազգային և միջազգային նորմերով ամրագրված քաղաքացիական, տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք համատեղելի են ազատազրկման հետ, չպետք է մերժվեն[55]:

Երեխաների մինչդատական կալանքը պետք է օգտագործվի որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամկետով[56]: Օրենքը պետք է հստակորեն սահմանի այն պայմանները, երբ այն կարող է օգտագործվել, մասնավորապես ապահովելու համար երեխաների ներկայությունը դատական նիստերին կամ որպես պաշտպանության միջոց, եթե երեխաները գտնվում են անուղղակի վտանգի մեջ կամ վտանգում են իրենց կամ մյուսներին:

Օրենքը պետք է սահմանափակի մինչդատական կալանքի յուրաքանչյուր ժամանակահատվածի տևողությունը և նախատեսի պարբերական դատական վերանայում: Անկախ այն հանգամանքից՝ կալանքը ընտրվել է մեկ կամ մի քանի դատական ակտի հիման վրա, օրենքը պետք է սահմանի կալանքի ողջ տևողության առավելագույն սահման, որից ավելի երկար երեխան չի կարող գտնվել կալանքի տակ, անկախ այն հանգամանքից՝ քրեական գործընթացներն ավարտվել են թե ոչ:

Ազատությունից զրկված երեխաները պետք է պահվեն մեծահասակներից առանձին: Նրանք պետք է տեղավորվեն հատուկ հաստատություններում, մեծահասակների համար նախատեսված բանտերից և այլ կառույցներից առանձին: Երեխաները կարող են պահվել մեծահասակների հետ միայն խիստ

---

[54] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, պարագրաֆ 19, https://rm.coe.int/16804b2cf3

[55] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, 3.7.1-3.7.4 պարագրաֆներ, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[56] ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ, կետ 17, https://www.unodc.org/pdf/criminal_justice/United_Nations_Rules_for_the_Protection_of_Juveniles_Deprived_of_their_Liberty.pdf

բացառիկ դեպքերում, եթե դա բխում է նրանց լավագույն շահից կամ այլոց պաշտպանությունից:

Ազատությունից զրկված երեխաները պետք է ունենան իրենց ընտանիքի հետ կանոնավոր կապ պահպանելու իրավունք՝ նամակագրության, ինչպես նաև փոխադարձ այցելությունների միջոցով: Այցելություններին նպաստելու համար երեխաները պետք է տեղակայվեն այնպիսի հաստատություններում, որոնք հնարավորինս մոտ են նրանց ընտանիքի բնակության վայրին:

Երեխաների պահման վայրի անձնակազմը պետք է նպաստի և խրախուսի կապերը ավելի լայն համայնքի անդամների հետ, ներառյալ ընկերների կամ այլ անձանց կամ հեղինակավոր արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այս կապերի առումով կարող են սահմանվել բացառիկ սահմանափակումներ, որոնք իրավաչափ են, եթե կատարվել են երեխայի լավագույն շահի, այլ անձանց պաշտպանության կամ արդարադատության շահերի պաշտպանության նպատակով: Այսպիսի սահմանափակումներն իրավաչափ համարող հանգամանքները պետք է հստակորեն սահմանվեն օրենքով և չթողնվեն իրավասու մարմինների հայեցողությանը:

Իրենց տեղակայման վայրի կամ ազատազրկման պայմանների հետ կապված բողոքներ ունեցող երեխաները պետք է իրավունք ունենան կենտրոնական կամ այլ համապատասխան վարչակազմին, դատական մարմնին կամ այլ համապատասխան անկախ մարմնին ներկայացնելու բողոքներ և խնդրանքներ առանց բովանդակային գրաքննության, և տեղեկացված լինեն պատասխանի մասին առանց ձգձգումների: Երեխաները պետք է տեղեկացված լինեն այս մեխանիզմների մասին և դրանք պետք է հասանելի լինեն նրանց համար[57]:

Մեկնաբանություն

Երեխաների սոցիալական զարգացման և ինտեգրման, ինչպես նաև նրանց վերականգնման ապահովումը պետք է ուղղորդեն արդարադատական մարմինների որոշումները: Պաշտպանության, կրթության, վերապատրաստման և սոցիալական ինտեգրման հետ կապված երեխաների կարիքները պետք է հաշվի առնվեն այս որոշումներում: Այն պետք է դիտարկվի որպես հիմնարար նպատակ երեխաների համար կիրառվող բոլոր միջոցների դեպքում՝ ինչպես երեխաների պաշտպանության, այնպես էլ քրեական, ընտանեկան և այլ հարցերում:

Երեխաներին ազատությունից զրկելը կարող է հակասել այս նպատակին: Այս կապակցությամբ պետք է օգտագործվի երկկողմանի ռազմավարություն: Մի կողմից, արդարադատությունը պետք է նվազագույնի հասցնի ազատազրկման կիրառումը, մյուս կողմից՝ ազատությունից զրկելու հետ կապված միջոցների ցանկը պետք է լինի ավելի ընդգրկուն, քան պարզապես կալանքը:

[57] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, Բաժին 3.7, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

Մինչդատական կալանքը վնասակար է երեխայի համար և պետք է սահմանափակվի դրա կիրառումը միայն այնպիսի դեպքերի համար և այնպիսի ժամանակահատվածով, որն անխուսափելի է: Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն դիրքորոշում է հայտնել առ այն, որ ազատությունից զրկված երեխան «պետք է ֆորմալ առումով մեղադրվի ենթադրյալ իրավախախտումը կատարելու մեջ և կանգնի դատարանի կամ այլ իրավասու, անկախ և անկողմնակալ դատական մարմնի առջև, ոչ ուշ քան մինչդատական կալանքը սահմանելու պահից 30 օրվա ընթացքում: … Անդամ պետությունները պետք է ընդունեն անհրաժեշտ իրավական դրույթներ ապահովելու համար դատարանի, անչափահասների հարցերով դատավորի կամ այլ իրավասու մարմնի կողմից մեղադրանքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը՝ ոչ ուշ քան մեղադրանքը ներկայացնելու պահից 6 ամսվա ընթացքում»[58]:

2.8. Իրավախախտում կատարած երեխաների տարիքը[59]

Քրեական պատասխանատվության համար սահմանված նվազագույն տարիքն այն տարիքն է, որից հետո երեխաները կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության քրեական արդարադատական գործընթացների համաձայն: Այդ տարիքը չպետք է ցածր լինի 12 տարեկանից, և պետությունները խրախուսվում են ընտրելու ավելի բարձր տարիք: Այդ տարիքը պետք է սահմանվի օրենքով և կիրառվի քրեական օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավախախտումների համար: Քրեական պատասխանատվության տարիքի չհասած երեխայի կողմից իրավախախտում կատարելու դեպքում նրա նկատմամբ պետք է կիրառվեն երեխաների խնամքի և երեխաների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պաշտպանության միջոցներ: Դրանք պետք է կիրառվեն նաև այն դեպքում, երբ իրավախախտում կատարած երեխաների քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքը լրանում է դատական գործընթացների ժամանակ:

Երեխայի նկատմամբ մինչդատական կալանքի կիրառումը ավելի քան 6 ամիս ժամկետով, չի համապատասխանում Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 10 Ընդհանուր մեկնաբանության 83-րդ պարագրաֆին:

Քրեական չափահասության տարիքը այն տարիքն է, որից հետո երեխաները համարվում են չափահասներ քրեական օրենսդրության համաձայն և նրանց դադարում են վերաբերել որպես երեխաներ: Այդ տարիքը պետք է լինի 18 տարեկանը: Պետք է առկա լինեն կրթական միջոցներ իրավախախտում կատարելու մեջ մեղավոր ճանաչված 18-21 տարեկան չափահասների նկատմամբ կիրառելու համար: Եթե առկա է

[58] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 83

[59] Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 (2007) Ընդհանուր մեկնաբանությունը Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին, 30-39 պարագրաֆներ

անհստակություն երեխայի տարիքի հետ կապված, ապա պետք է կիրառվի նրա համար առավել բարենպաստ մեկնաբանությունը:

Մեկնաբանություն:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը պետք է սահմանվի օրենքով: Այն չպետք է թողնվի դատարանի հայեցողությանը: Նվազագույն տարիքը չպետք է տարբեր լինի ըստ իրավախախտման ծանրության: Այստեղ խնդիրն այն է, թե երեխան երբ է համարվում բավարար չափով հասուն՝ իր վարքագծի համար պատասխանատվություն կրելու առումով: Հասունության մակարդակը կախված չէ իրավախախտման ծանրությունից: Ինչպես նշել է Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն, «Կոմիտեն ցանկանում է իր մտահոգությունը հայտնել այն պրակտիկայի կապակցությամբ, որը թույլ է տալիս քրեական պատասխանատվության տարիքից բացառություններ, և հնարավոր է դարձնում քրեական պատասխանատվության ավելի ցածր տարիքի կիրառումն այն դեպքում, երբ երեխան, օրինակ, մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ կամ երեխան համարվում է բավարար չափով հասուն քրեական պատասխանատվության ենթարկվելու համար»[60]:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի անդամ պետությունները ճանաչում են մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու Կոնվենցիայի 40-րդ հոդվածի դրույթներով սահմանված վերաբերմունքի: Սա նշանակում է, որ ենթադրյալ իրավախախտման կատարման ժամանակ 18 տարեկանը չլրացած յուրաքանչյուր երեխա պետք է արժանանա երեխաների մասնակցությամբ դատավարության կանոններին համապատասխանող վերաբերմունքի[61]:

Մի շարք պետություններ համարում են, որ անցումային ժամանակահատվածը ցանկալի է, երբ երեխան իրավական առումով դառնում է չափահաս: 18 տարեկան երիտասարդ չափահասները տարբեր են, և նրանցից որոշները կարող են առավել շատ օգուտ քաղել կրթական միջոցներից, քան մեծահասակների համար նախատեսված պատիժներից: Դա է պատճառը, որ առաջարկվում է սահմանել կրթական միջոցների կիրառման հնարավորությունն այն երիտասարդ չափահասների նկատմամբ, ովքեր մեղավոր են ճանաչվել 18-21 տարեկան հասակում կատարված իրավախախտման համար: Սա նաև համահունչ է Պեկինյան կանոններին, որի համաձայն պետք է ջանքեր գործադրել տարածելու համար Կանոններով սահմանված սկզբունքները երիտասարդ չափահաս իրավախախտների վրա[62]: Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն[63]:

2.9. Կարգավիճակի հետ կապված իրավախախտումներ

Երեխաները չպետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության այնպիսի արարքների համար, որոնք չեն համարվում իրավախախտումներ՝

[60] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 34
[61] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 37
[62] Պեկինյան կանոններ, պարագրաֆ 3.3
[63] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 38

չափահասների կողմից կատարվելու դեպքում: Երեխայի կարգավիճակի հետ կապված իրավախախտումները պետք է քրեորեն պատժելի չլինեն: Այնպիսի վարքագիծը, ինչպիսին է՝ շրջմոլիկությունը, փողոցներում թափառելը, փախուստը կամ այլ լուրջ վարքագծային խախտումները պետք է հասցեագրվեն երեխաների պաշտպանության միջոցների կիրառմամբ:

Մեկնաբանություն:

Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն իր թիվ 10 ընդհանուր մեկնաբանությունում ամփոփում է այս հարցը. «Կան դեպքեր, երբ քրեական օրենքը քրեականացնում է երեխաների վարքագծային խնդիրները, ինչպիսիք են շրջմոլիկությունը, փողոցներում թափառելը, փախուստը կամ այլ գործողություններ, որոնք հաճախ հոգեբանական և սոցիալ-տնտեսական խնդիրների արդյունք են: Մասնավորապես, խնդիրն այն է, որ աղջիկները և թափառաշրջիկ երեխաները հաճախ քրեականացման զոհ են դառնում: Այս գործողությունները, որոնք կոչվում են «Կարգավիճակով պայմանավորված իրավախախտումներ», այդպիսին չեն համարվում, եթե կատարվում են չափահասների կողմից: Կոմիտեն առաջարկում է անդամ պետություններին վերացնել կարգավիճակով պայմանավորված իրավախախտումների մասին դրույթները՝ սահմանելով երեխաների և մեծահասակների համար հավասար վերաբերմունք օրենքի առջև: Կոմիտեն նաև հորդորում է կատարում Ռիադյան ուղենիշների 56 հոդվածին»[64]:

2.10. Մասնավոր կյանքի պաշտպանություն[65]

Երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ մասնավոր տեղեկատվություն պարունակող տեսաձայնագրությունները, փաստաթղթերը և նիստերի բովանդակությունը պետք է լինի խիստ գաղտնի և հասանելի չլինի այլ անձանց համար: Հասանելիությունը պետք է տրամադրվի միայն գործի հետ ուղղակիորեն կապված և սահմանված կարգով լիազորված այլ անձանց:

Երեխայի ներգրավվածությամբ գործի վերաբերյալ չպետք է հրապարակվի որևէ տեղեկատվություն, որը կարող է բացահայտել կամ անուղղակիորեն հնարավոր դարձնել երեխայի ինքնության բացահայտումը:

Վկա, մեղադրյալ կամ այլ կարգավիճակ ունեցող երեխաների ներգրավվածությամբ դատական լսումները պետք է իրականացվեն դռնփակ, հանրության և լրատվամիջոցների բացակայությամբ: Այս կանոնից բացառությունները պետք է կատարվեն խիստ սահմանափակ դեպքերում և հստակ սահմանված լինեն օրենքով: Վերջնարդյունքը/դատավճիռը/պատիժը

[64] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 8

[65] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, Բաժին 3.10, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

պետք է հրապարակվի դռնբաց նիստում այնպես, որ երեխայի ինքնությունը չբացահայտվի:

Իրավախախտ երեխայի վերաբերյալ տվյալները չպետք է օգտագործվեն մեծահասակների համար նախատեսված վարույթներում, հետագա գործերում միևնույն իրավախախտի ներգրավված լինելու դեպքում:

Պետությունները պետք է ընդունեն իրավական նորմեր, որոնք թույլ կտան երիտասարդ իրավախախտի վերաբերյալ քրեական փաստաթղթերի ավտոմատ ոչնչացումը, եթե նա իրավախախտումը կատարել է մինչև 18 տարեկան դառնալը: Որոշ սահմանափակ դեպքերում, օրինակ՝ ծանր հանցագործությունների դեպքում ոչնչացումը կարող է ավտոմատ կերպով չիրականացվել, այլ դա հնարավոր լինի իրականացնել երեխայի պահանջով, եթե առկա են կոնկրետ պայմաններ (օրինակ՝ վերջին դատապարտումից հետո երկու տարվա ընթացքում իրավախախտում չկատարելը):

Երեխայի ներգրավվածությամբ գործով տեղեկության հրապարակումը խախտում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 16-րդ եւ 40-րդ հոդվածները, եթե այդ տեղեկատվության հիման վրա հնարավոր է նույնականացնել երեխային:

Մեկնաբանություն:

Երեխայի մասնավոր կյանքի գաղտնիության հարցերը կարգավորվում են Երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի երկու հոդվածով: Մասնավորապես, 16-րդ հոդվածի համաձայն « 1. Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության: 2. Երեխան նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի»: Կոնվենցիայի 40-րդ հոդվածը սահմանում է, որ «Անդամ պետությունները պետք է … ապահովեն, որ մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխա ունենա առնվազն հետևյալ երաշխիքները. … (vii) լիովին հարգվի նրա անձնական կյանքի անձեռնմխելիությունը քննության բոլոր փուլերում»[66]: 16-րդ հոդվածը կիրառելի է բոլոր հարցերի դեպքում, իսկ 40-րդ հոդվածը հատկապես օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ:

Երիտասարդների և ընտանեկան հարցերով դատավորների և մագիստրների դատական էթիկայի սկզբունքների 8-րդ սկզբունքի համաձայն «դատավորը պետք է հարգի իր դատական գործունեության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնի բնույթը, որի բացահայտումը կամ օգտագործումը կարող է համարվել երեխայի կամ երիտասարդի մասնավոր կյանքի խախտում, եթե նա կամ նրա ընտանիքը կամ այլ անձ ընդգրկված են դատավարական գործընթացում»[67]:

Երեխաների և նրանց ընտանիքների մասնավոր կյանքի մասին խիստ անձնական տեղեկատվությունը ներկայացվում և քննարկվում է երեխաների

[66] http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf

[67] https://www.crin.org/en/library/publications/principles-judicial-ethics-youth-and-family-judges-and-magistrates

ներգրավվածությամբ բազմաթիվ գործերում: Այդ տեղեկատվության մեծ մասը հանրային հետաքրքրության համար չէ: Դրա հրապարակումը կարող է խախտում հանդիսանալ, հատկապես երբ երեխաներին հնարավոր է լինում նույնականացնել: Ստիգմատիզացիան և պիտակավորումը կարող են ունենալ երկարաժամկետ ազդեցություն կրթության, աշխատանքի, ցանկալի ընկերների և անձնական անվտանգության հասանելիության հետ կապված նրանց ներկա և ապագա հնարավորությունների վրա, որը վտանգում է նրանց սոցիալական ինտեգրումը և լիարժեք քաղաքացի դառնալու նրանց հնարավորությունները:

2.11. Դատավարական գործընթացների ձգձգումներ և առաջնահերթություն[68]

Խիստ կարևոր է, որ դատավարական գործընթացների ձգձգումները հասցվեն նվազագույնի, պահպանելով իրավունքի գերակայությունը և այլ շահագրգիռ անձանց իրավունքները: Երեխաների ներգրավվածությամբ դատավարական գործընթացները պետք է կազմակերպվեն այնպես, որ հնարավորինս նվազեցնեն ընթացակարգային քայլերի քանակը:

Անչափահասի ներգրավվածությամբ դատական գործընթացների անտեղի ձգձգումները չեն բխում երեխայի լավագույն շահից

Երեխաների ներգրավվածությամբ բոլոր գործընթացները պետք է իրականացվեն պատշաճ կերպով, և ռիսկերի ու խոցելիության հիման վրա հրատապության աստիճանը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործին վերագրվող առաջնահերթության մակարդակի սահմանման համար:

Մեկնաբանություն:

Ձգձգումները կարող են մեծապես վնասել երեխայի լավագույն շահը: Դրանք ոչ միայն ավելացնում են երեխայի ճակատագրի վերաբերյալ անորոշությունը, այլև անհնար են դարձնում արագ միջամտությունը, որը կարող է էական լինել երեխայի վիճակի վատթարացման առումով: Ընտանեկան հարցերում դրանք կարող են ունենալ ոչ բարենպաստ հետևանքներ երեխաների և ընտանիքի հարաբերությունների համար:

Ձգձգումներ կարող են առկա լինել նաև միջոցների կիրառման գործընթացում: Դրանք կարող են ազդել երիտասարդի՝ տվյալ միջոցին լուրջ վերաբերելու ընկալման վրա: Եթե այդ միջոցներն այդքան կարևոր են, ինչպես նշել է դատարանը, ապա ինչու դրանք չեն իրականացվում անմիջապես դատարանի որոշումից հետո:

Առանց արագ միջամտության, կյանքը վերադառնում է նորմալ հուն, որտեղ անհրաժեշտ փոփոխությունների կիրառումը դառնում է դժվար:

Անտեղի ձգձգումների բացառումը չպետք է նաև հանգեցնեն անտեղի շտապողականության դրսևորման: Այն չպետք է հանգեցնի արագ դատաքննությունների, որի ընթացքում իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքը, կողմերի իրավունքները կամ դատական պաշտոնյաների՝ երեխայի

[68] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, Բաժին 3.11, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

կարգավիճակի վերաբերյալ լիարժեք տեղեկացված լինելու կարողությունը կարող է վտանգվել: Այս նկատառումները պետք է հաշվի առնվեն ձգձման անհրաժեշտությունը գնահատելիս: Գործընթացը հիմնականում ընդգրկում է միջամտող դերակատարներ, ինչպիսիք են՝ ոստիկանության աշխատակիցները, սոցիալական աշխատողները, հոգեբանները, իրավաբանները, դատախազները, դատավորները, պրոբացիոն աշխատակիցները, կրթողները և այլն: Նրանք բոլորը նպաստում են ընդհանուր ձգձմանը: Անհրաժեշտ է սկզբնապես բոլոր դերակատարների մոտ ստեղծել իրավագիտակցություն առ այն, որ ձգձգումների նվազեցումը բոլոր դերակատարների գործն է:

2.12 Բազմաճյուղային և միջճյուղային մոտեցում[69]

Երեխաների ներգրավվածությամբ դատավարությունների ընթացքում հասցեագրման ենթակա խնդիրների բնույթը կարող է լինել ոչ միայն իրավական: Երեխաների և նրանց կարգավիճակի վերաբերյալ համակողմանի ընկալման հիման վրա կայացված որոշումը պահանջում է գնահատականներ և միջամտություններ մասնագետների կողմից, որոնք գործում են տարբեր ճյուղերում (ինչպիսիք են՝ հոգեբանները, սոցիալական աշխատողները, հոգեբույժները, կրթողները և այլն): Նրանց ծառայությունները պետք է հասանելի լինեն դատարանների համար, և վերջիններս անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործեն դրանք հիմնավոր որոշումներ կայացնելու համար:

Մեկնաբանություն

Բազմաճյուղային կամ միջճյուղային մոտեցումը չպետք է մեկնաբանվի որպես յուրաքանչյուրի պարտականություն վերապատրաստվելու տարբեր ճյուղերում, քանի որ դա լիովին անիրատեսական կլինի: Պահանջը վերաբերում է հետևյալին.
Յուրաքանչյուր ոք պետք է ունենա համապատասխան կրթական աստիճան իր գործառույթներն իրականացնելու համար,
Յուրաքանչյուր ոք իր հիմնական կրթությանը պետք է ավելացնի հիմնարար վերապատրաստումներ այլ ճյուղերի այն բաղադրիչների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են հասկանալու համար տվյալ ճյուղի անհրաժեշտ ներդրումը:
Երեխաների հետ աշխատող յուրաքանչյուր ոք պետք է վերապատրաստվի երեխաների հետ աշխատելու համար, և մասնագետներն ու պաշտոնյաները պետք է իրենց գրավոր և բանավոր գրագրությունն իրականացնեն այլ ճյուղերի մասնագետների համար հասկանալի եզրույթներով:

[69] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, Բաժին 3.12, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

2.13 Մասնագիտացում, ընտրություն և վերապատրաստում[70]

Անչափահասները հարցաքննվում են համապատասխան վերապատրաստում անցած մասնագետների կողմից

Արդարադատության համակարգում երեխաների հետ աշխատող անձանց ընտրությունը պետք է կատարվի երեխաների հետ աշխատանքում նրանց մասնագիտական դերակատարման հմտությունների հիման վրա:

Վերապատրաստումն անհրաժեշտ է անձի ողջ մասնագիտական կյանքի ընթացքում առավել որակյալ ծառայություններ մատուցելու համար: Վերապատրաստումը պետք է անցակցվի միչև աշխատանքի անցնելը, ծառայությունների մատուցման ժամանակահատվածում և ունենա շարունակական բնույթ:

Արդարադատության համակարգում պետք է ձևավորվեն մասնագիտական ստորաբաժանումներ, որոնք աշխատում են երեխաների և նրանց ընտանիքների ներգրավվածության դեպքում: Դա պետք է իրականացվի ոստիկանությունում, դատական համակարգում, իրավաբանական և այլ ծառայություններում, որոնք երեխաներին տրամադրում են իրավաբանական օգնություն և իրականացնում են ներկայացուցչություն, և դատախազությունում: Պետք է նշանակվեն մասնագիտացված դատավորներ:

Մեկնաբանություն:
Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն իր թիվ 10 ընդհանուր մեկնաբանությունում ընդգծում է երեխաների մասնակցությամբ արդարադատության մեջ ընդգրկված անձանց մասնագիտական որակի խիստ կարևորությունը երեխաների իրավունքների պաշտպանության գործում: Սա կիրառելի է բոլոր երեխաների նկատմամբ, ովքեր ընդգրկված են արդարադատության համակարգում[71]: Արդարադատության որակը, ներառյալ իրավունքների նկատմամբ հարգանքը մեծապես կախված է այն իրականացնողների մասնագիտական որակից:

[70] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, Բաժին 3.13, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf
[71] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, պարագրաֆ 40

ՄԱՍ 3. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

3.1. Երեխաների ներգրավվածությունը մինչդատական վարույթում

Ենթադրյալ իրավախախտում կատարելու համար ձերբակալված երեխաների նկատմամբ պետք է ձեռնարկվեն անվտանգության միջոցներ, որոնք նպատակ ունեն նրանց տարիքի հետ կապված անհրաժեշտ պաշտպանություն ապահովել: Մասնավորապես, օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները.

1. Հետաքննության մարմինը պետք է հարգի բոլոր երեխաների արժանապատվությունը և անձնական իրավունքները, և հաշվի առնի նրանց խոցելիությունը, այսինքն՝ պետք է հաշվի առնվեն նրանց տարիքն ու հասունությունը, ինչպես նաև այն երեխաների այլ հատուկ կարիքները, ովքեր կարող են ֆիզիկական կամ հոգեկան ճնշման ներքո գտնվել կամ ունեն հաշմանդամություն կամ հաղորդակցվելու խնդիրներ.
2. Հետաքննության մարմնի կողմից ձերբակալված երեխաները պետք է տեղեկացվեն իրենց ձերբակալման պատճառների մասին իրենց տարիքին և ընկալման մակարդակին համապատասխան.
3. Ծնողներին պետք է տեղեկացնել իրենց երեխաների ձերբակալման վայրում գտնվելու մասին՝ մանրամասնելով երեխայի ձերբակալման պատճառը և նրանց հրավիրելով ոստիկանություն.
4. Ձերբակալված երեխաներին պետք է տրամադրվի իրավաբան և հնարավորություն տրվի կապ հաստատել ծնողների կամ իրենց կողմից վստահելի չափահաս անձի հետ: Նրանք չպետք է հարցաքննվեն քրեորեն պատժելի արարքի վերաբերյալ կամ տան կամ ստորագրեն բացատրություն այդպիսի ներգրավվածության մասին, առանց իրավաբանի կամ առնվազն մեկ ծնողի ներկայության, կամ եթե ծնողը ներկա չէ, ապա իրենց համար վստահելի որևէ չափահաս անձի ներկայության: Ծնողի կամ այդ անձի ներգրավվածությունը կարող է բացառվել, եթե առկա է ենթադրյալ իրավախախտման մեջ նրանց ներգրավվածության կասկած:
5. Դատախազները պետք է ապահովեն երեխաների նկատմամբ համապատասխան մոտեցումների կիրառումը հետաքննության գործընթացում՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության իրականացման գործառույթի շրջանակներում:

6. Ձերբակալված երեխաները պետք է պահվեն ապահով և իրենց կարիքներին համապատասխան պայմաններում: Նրանք չպետք է տեղակայվեն մեծահասակների հետ նույն վայրում[72]:

Տուժող և վկա հանդիսացող երեխաները պետք է կարողանան տեղեկություն հայտնել նվազագույն սթրեսի պայմաններում և պետք է պաշտպանված լինեն թշնամական կամ վախեցնող հարցերից: Հարցաքննության պրակտիկան պետք է թույլ տա պաշտպանել երեխաներին և հարգել նրանց իրավունքները, առանց խախտելու պաշտպանյալի արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես, վկա հանդիսացող երեխաների նկատմամբ պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները (որոնք կիրառելի են նաև տուժող երեխաների համար).

1. Վկա հանդիսացող երեխաները չպետք է հարցաքննվեն քննչական մարմինների կողմից առանց իրենց ծնողների, ազգականի կամ օրինական խնամակալի ներկայության, կամ եթե նրանց ներկայությունը հակասում է երեխայի լավագույն շահին, ապա՝ սոցիալական աշխատողի ներկայությամբ:
2. Քննչական մարմինները վկա հանդիսացող երեխայի հարցաքննությունը պետք է իրականացնեն առանց երեխային վնասելու և նպաստելով նրա բարեկեցությանը:
3. Քննչական մարմինները պետք է ապահովեն, որ վկա հանդիսացող երեխաները, հատկապես սեռական շահագործման զոհ հանդիսացող երեխաները, կապի մեջ չմտնեն կամ չառնչվեն ենթադրյալ հանցագործությունը կատարող անձի հետ: Հարցաքննության սենյակները և սպասասրահները պետք է հարմարեցվեն երեխաների համար բարենպաստ միջավայրի ձևավորման պահանջներին:
4. Սեռական շահագործման զոհ հանդիսացող իգական սեռի ներկայացուցիչների հետ պետք է աշխատեն կին մասնագետները, և նրանց պետք է տրամադրվի անհրաժեշտ հարմարավետություն, հոգեբանական և խորհրդատվական օգնություն:
5. Անհրաժեշտության դեպքում վկա հանդիսացող երեխան պետք է հարցաքննվի միջնորդի միջոցով:
6. Իրավակիրառ գործունեություն իրականացնող անձնակազմը, սեռական շահագործման զոհ հանդիսացող երեխաների ծնողները և ընտանիքները պետք է ձեռնպահ մնան երեխայի վրա ճնշում գործադրելուց՝ նրան ցուցմունք տալուց հետ պահելու համար:

[72] Եվրոպայի խորհրդի Երեխայի համար սահմանված արդարադատության ուղենիշներ, 27-33 պարագրաֆներ, https://rm.coe.int/16804b2cf3

7. Երեխաների հարցաքննությունը պետք է իրականացվի վերապատրաստված մասնագետների կողմից՝ երեխաների շահերի հաշվառմամբ ու նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունի դրսևորմամբ[73]:

3.2. Դատաքննության այլընտրանքներ[74]

Դատաքննության այլընտրանքները խրախուսելի են, եթե դրանք կարող են ավելի լավ ծառայել երեխայի և հասարակության շահերին: Դրանք պետք է կիրառվեն բոլոր (քրեական, քաղաքացիական, ընտանեկան, երիտասարդների պաշտպանության և այլ) հարցերում, եթե կարող են նպաստել խնդիրների լուծմանը: Դատաքննության այլընտրանքների դեպքում երեխաներին պետք է տրամադրվի իրավունքների և իրավական երաշխիքների նույն մակարդակը, որը սահմանված է դատաքննության դեպքում: Քրեական հարցերի հետ կապված պետք է մշակվեն արտադատական գործընթացներ և միջոցներ, մասնավորապես.

1. Ներպետական օրենսդրությունը պետք է քննիչին կամ դատախազին հնարավորություն տա չներկայացնել մեղադրանք, կիրառելով դատաքննության այլընտրանքներ կամ առանց դրանց կիրառման: Քննիչը կամ դատախազը պետք է կիրառեն այդ լիազորությունը, եթե դա չի հակասում արդարադատության շահերին:
2. Արտադատական գործընթացների (խնամք, նախազգուշացում, խնամակալություն, վարքագծի նկատմամբ հսկողություն, պրոբացիա, խորհրդատվություն, դաստիարակչական ու վերականգնողական ծրագրեր, հատուկ հաստատությունում տեղավորելը) և միջոցների վերաբերյալ կանոնները պետք է սահմանվեն օրենքով.
3. Արտադատական գործընթացները և հատուկ միջոցները պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ առկա է համոզիչ ապացույց այն մասին, որ երեխան կատարել է ենթադրյալ իրավախախտումը: Երեխան պետք է ընդունի իր արարքի համար պատասխանատվությունը:
4. Արտադատական գործընթացները հիմնված են մեդիացիայի, հաշտեցման, ընտանեկան խմբային խորհրդատվությունների, վերականգնողական արդարադատության և այլ նմանատիպ մոտեցումների վրա: Դրանք պետք է նախաձեռնվեն առանց որևէ դատական ներգրավվածության: Սակայն, դրանք կարող են նախաձեռնվել նաև դատական գործընթացների

[73] Մանրամասն տես Ուղեցույց դատական համակարգի հետ հաղորդակցվող երեխաների վերաբերյալ, կետ 4.1.2, http://www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf

[74] Տես նույն տեղում, բաժին 4.3

ընթացքում՝ դատարանի կողմից պատվիրակման միջոցով և նրա վերահսկողության ներքո:

5. Արտադատական գործընթացներում մասնակցությունը պետք է լինի գաղտնի: [75]

3.3. Դատարանների և այլ մարմինների մատչելիությունը երեխաների համար

Բոլոր երեխաներն իրենց իրավունքների արդյունավետ իրականացման կամ իրենց իրավունքների խախտումների հիման վրա գործելու համար պետք է ապահովված լինեն պաշտպանության միջոցների մատչելիությամբ: Դատարանների կամ այլ մարմինների մատչելիության խոչընդոտները, ինչպիսիք են՝ գործընթացների արժեքը կամ իրավաբանական օգնության կամ ներկայացուցչության պակասը, պետք է վերացվեն:

Դատավորներն իրենց արդարադատական գործառույթն իրականացնելիս պետք է լինեն անկախ: Անհրաժեշտության դեպքում դատարանները պետք է ներդաշնակեցնեն երեխայի լավագույն շահը տուժողի և հասարակության շահի հետ:

3.4. Իրավախախտում կատարած երեխաների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներ[76]

Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների նկամամբ պատասխանատվության միջոցների վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանները պետք է հետևեն հետևյալ սկզբունքներին.

1. Միջոցները պետք է լինեն համաչափ ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև երեխայի հետ կապված հանգամանքներին և երեխայի ու հասարակության կարիքներին: Այս համատեքստում երեխայի լավագույն շահը պետք է ունենա առաջնային նշանակություն միջոցի ընտրության հարցում:
2. Հնարավորության դեպքում պետք է գերակայություն տրվի վերականգնողական գործընթացներին և միջոցներին: Այն չպետք է սահմանափակվի միայն անչափահաս իրավախախտների կամ առաջին

[75] Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարական օրենսդրությունը ներկայումս օրենսդրական հիմքեր չի ապահովում դատաքննության այլընտրանքների կիրառման համար:
[76] Մանրամասն տես ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ, Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն

անգամ իրավախախտում կատարած երեխաների ներգրավվածությամբ գործերով:

3. Երեխաների անձնական ազատության սահմանափակումները պետք է սահմանվեն միայն մանրամասն ուսումնասիրությունից հետո, և պետք է հասցվեն նվազագույնի՝ ինչպես դրանց տևողության, այնպես էլ բնույթի առումով:
4. Ազատությունից զրկումը պետք է լինի ծայրահեղ միջոց:

Դատարանների համար պետք է հասանելի լինեն բավարար քանակությամբ տարբեր միջոցներ, որոնք ապահովում են ճկունություն, անհատական գործերի կարիքներին հարմարեցում և ազատությունից զրկելուց խուսափում՝ առավելագույն հնարավորության սահմաններում: Միջոցի ընտրությունը կոնկրետ անհատական գործի կարիքներին հարմարեցնելու համար դատարանները պետք է ունենան հայեցողության համապատասխան շրջանակ:

3.5. Բողոքարկման իրավունք[77]

Երեխաները պետք է իրավունք ունենան բողոքարկել իրենց շահերին առնչվող որոշումները: Նրանց բողոքարկման իրավունքը չպետք է լինի ավելի պակաս, քան նույն հանգամանքներում չափահասների իրավունքն է: Այս բողոքը պետք է քննվի պատշաճ կերպով ավելի բարձր, իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից:

[77] Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն, 60-61 պարագրաֆներ

ՄԱՍ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Երեխաների մասնակցությամբ մինչդատական և դատական վարույթի գործառնական ուղեցույցի կիրառման ներպետական իրավական հիմքը

Ի կատարումն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կողմից ստանձված միջազգային պարտականությունների՝ երեխաների մասնակցությամբ մինչդատական և դատական վարույթի ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերն ու սկզբունքները պետք է կիրառվեն ներպետական մակարդակում բոլոր իրավասու սուբյեկտների կողմից: Այդպիսի իմպլեմենտացիան դատական և մինչդատական վարույթում պետք է իրականացվի ոչ միայն այն դեպքերում, երբ համապատասխան օրենքներն ու դատավարական օրենսգրքերը արտացոլում են նշված միջազգային նորմերն ու սկզբունքները, այլ նաև այն դեպքերում, երբ դրանք հստակորեն արտացոլված չեն և/կամ առկա են օրենսդրական բացեր:

Նման իմպլեմենտացիայի իրավական հիմքը, inter alia, ՀՀ 2015թ. փոփոխություններով սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասն է, որի համաձայն «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Սա նշանակում է, որ հանրային իշխանության, ներառյալ իրավակիրառ մարմինները (սույն ձեռնարկի համատեքստում՝ դատավորներ և դատախազներ) ՀՀ սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավունքներն ու ազատությունները մեկնաբանելիս պետք է հաշվի առնեն այն միջազգային մարմինների պրակտիկան (իրավական դիրքորոշումներն ու մեկնաբանությունները), որոնք գործում են ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա:

Երեխաների մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ միջազգային պրակտիկան իր արտահայտությունն է գտել, ի թիվս այլոց, ՀՀ կողմից վավերացված ԵԽ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի հիման վրա գործող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հիման վրա գործող ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանություններում:

Ինչ վերաբերում է այն միջազգային փաստաթղթերին, որոնք չեն ընդունվել մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային մարմինների կողմից, ինչպիսիք

են օրինակ՝ սույն ուղեցույցի 1-ին մասի 1.1 ենթակետում նշված ՄԱԿ-ի Պեկինյան կանոնները, Հավանայի կանոնները, Ռիադյան սկզբունքները, Տոկիոյի կանոնները, Վիեննայի սկզբունքները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականները, որոնք հանդիսանում են միջազգային լավագույն փորձի ու ստանդարտների արտացոլում երեխաների մասնակցությամբ արդարադատության ոլորտում, ապա այդպիսիք ունեն կողմնորոշիչ, ուղղորդող, խորհրդատվական նշանակություն ներպետական իրավակիրառ մարմինների համար՝ երեխայի իրավունքների մեկնաբանման ժամանակ: Վերոնշյալ փաստաթղթերը կարևոր են մարդու/երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի նորմերի իրավաընկալման և մեկնաբանման համար:

ՀՀ 2015թ. փոփոխություններով սահմանադրության մեջբերված 81-րդ հոդվածի 1-ին մասն ունի անմիջական գործողություն Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով («Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»), հետևաբար, հանրային իշխանության մարմիններն իրավակիրառ պրակտիկայում պետք է առաջնորդվեն սահմանադրության 2-րդ գլխի՝ անմիջականորեն գործող նորմերով[78]: Նույն հիմքով անմիջական գործողություն ունեն Սահմանադրության 37-րդ հոդվածի դրույթները[79], որոնց մեկնաբանությունն ու անմիջական կիրառությունը պետք է իրականացվի 81-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի հիման վրա:

Ինչպես արձանագրել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 2016թ. դեկտեմբերի 20-ի ՍԴՈ-1333 որոշման[80] 7-րդ կետում «ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 37-րդ հոդվածի, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերի դրույթները գործում են անմիջականորեն, և դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել այդ պահանջով»: Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանն ինչպես նշված, այնպես էլ մի շարք այլ որոշումներում իրավական դիրքորոշումներ է արտահայտել երեխաների իրավունքների, երեխայի լավագույն շահի, կարծիք արտահայտելու ազատության, լսված լինելու իրավունքի և այլ հարցերի վերաբերյալ, որոնք համահունչ են միջազգային նորմերին ու

[78] Սահմանադրական նորմերի անմիջական գործողության մասին մանրամասն տես ՍԴՈ-1000, 29 նոյեմբերի 2011թ. http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-1000.pdf

[79] Մասնավորապես, 37-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը, որոնք սահմանում են. «1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: 2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»:

[80] http://concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf

ստանդարտներին և պարտադիր են իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից կիրառման համար[81]:

Վերոշարադրյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավակիրառ, ներառյալ դատական և դատախազական մարմինները պարտավոր են ապահովել երեխաների մասնակցությամբ մինչդատական և դատական վարույթի ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների կիրառումը՝ ՀՀ սահմանադրության անմիջականորեն գործող նորմերի և Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա:

2. Երեխաների մասնակցությամբ մինչդատական և դատական վարույթում միջազգային նորմերի ու սկզբունքների կիրառման առաջարկներ

Սույն ենթակետը նպատակ ունի ներկայացնել երեխաների մասնակցությամբ մինչդատական և դատական վարույթում միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիայի պրակտիկ առաջարկներ, որոնք գործող օրենսդրության պայմաններում կարող են ապահովել երեխայի իրավունքների համապատասխան պաշտպանություն 4.1 ենթակետում ներկայացված իրավական հիմքի հիման վրա:

ՀՀ	Պրակտիկ խնդիր	Պոզիտիվ պրակտիկա	Նեգատիվ պրակտիկա
1.	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն դատավարության անչափահաս մասնակցի (տուժող, քաղաքացիական հայցվոր, կասկածյալ, մեղադրյալ) օրինական ներկայացուցիչ կարող են լինել նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, իսկ այդպիսիք չունենալու դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնին: Այս նորմը չի նախատեսում երեխայի լավագույն շահերից բխող օրինական ներկայացուցչի նշանակում ծնողի և երեխայի շահերի բախման դեպքում (օրինակ՝	Երեխայի լավագույն շահի առաջնահերթության մեկնաբանության հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմնին որպես օրինական ներկայացուցչի նշանակում, հաշվի առնելով նաև այդ ներկայացուցչության բովանդակային կողմը և բացառելով ձևական ներկայացուցչությունը	Երեխայի լավագույն շահի անտեսմամբ ծնողին որպես օրինական ներկայացուցչի նշանակում

[81] Տես ՍԴՈ-919, ՍԴՈ-1333 եւ այլն

	երբ երեխան տուժել է ծնողներից մեկի հանցավոր գործունեությունից, իսկ մյուս ծնողը նշանակվում է օրինական ներկայացուցիչ):		
2.	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի համաձայն մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում դրույթ հոգեբանի մասնակցության վերաբերյալ, իսկ մանկավարժի մասնակցությունը հաճախ կրում է ձևական բնույթ:	Անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննության իրականացումը **մանկավարժ-հոգեբանի** մասնակցությամբ: Մանկավարժ-հոգեբանների ներգրավվածությունը կարող է ապահովվել համագործակցելով համապատասխան տեղական կամ միջազգային կազմակերպությունների հետ (ցանկը տես Հավելված 2-ում):	Անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննության իրականացումը մանկավարժի ներգրավմամբ, որն ընտրվում է անչափահասի ուսուցիչների ցանկից, առանց հաշվի առնելու մասնագիտական որակավորումները:
3.	Տեղական ինքնակառավարման մարմնի հսկողությանը հանձնելը որպես անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը պրակտիկայում արդյունավետ չէ:	Տեղական ինքնակառավարման մարմնի հսկողությանը հանձնելու արդյունավետությունը կարող է ապահովվել համագործակցելով ընտանիքի և երեխայի աջակցության համայնքային կառույցների հետ (ցանկը տես Հավելված 2-ում):	Տեղական ինքնակառավարման մարմնի հսկողությանը հանձնելը՝ առանց համայնքային համապատասխան կառույցների հետ համագործակցության:
4.	ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում անչափահաս տուժողին կամ վկային անվճար իրավաբանական օգնության հնարավորություն:	Անչափահաս տուժողի և վկայի անվճար իրավաբանական օգնության իրավունքի իրացումն ապահովել՝ համագործակցելով համապատասխան տեղական կամ միջազգային կազմակերպությունների հետ (ցանկը տես Հավելված 2-ում):	Անչափահաս տուժողի և վկայի հարցաքննությունն առանց իրավաբանական օգնության:
5.	Անչափահասի մասնակցությամբ գործերով	Անչափահասի մասնակցությամբ	Անչափահասի մասնակցությամբ

	դատավարական փաստաթղթերը պարունակում են այնպիսի եզրույթներ և ձևակերպումներ, որոնք չէին կարող օգտագործվել անչափահասի կողմից, ինչի հետևանքով այդ փաստաթղթերի արժանահավատության կասկածներ են առաջանում:	դատավարական փաստաթղթերը կազմել երեխաների խոսքերի հիման վրա՝ ուշադրություն դաձնելով դրանց լեզվին և անչափահասի համար հասանելիությանը:	գործերով դատավարական փաստաթղթերի կազմումը գիտական եզրույթների և անչափահասի համար ոչ հասանելի ձևակերպումների օգտագործմամբ:
6.	Անչափահասի ներգրավվածությամբ դատաքննությանը անչափահասի մասնակցության ապահովումը պրակտիկայում երբեմն առաջացնում է խնդիրներ, այն դեպքում, երբ կալանքը որպես խափանման միջոց կիրառված չէ և ծնողը չի կարողանում/ցանկանում ապահովել անչափահասի մասնակցությունը:	Դատաքննությանը անչափահասի մասնակցության ապահովումը կարող է իրականացվել համագործակցելով համապատասխան տեղական կամ միջազգային կազմակերպությունների հետ (ցանկը տես Հավելված 2-ում), որոնք պետք է աշխատեն երեխայի հետ:	Դատաքննությանը անչափահասի մասնակցության ապահովումը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՄԱԿ-ի 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503
2. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(99)19 հանձնարարականը անդամ երկրներին՝ քրեական գործերով մեդիացիայի վերաբերյալ, https://rm.coe.int/16806f405a
3. United Nations, Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice (The Beijing Rules), General Assembly, resolution 40/33 of 29 November 1985, www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/beijingrules.pdf
4. United Nations, Rules for the Protection of Juveniles Deprived of their Liberty (The Havana Rules), General Assembly, resolution 45/113 of 14 December 1990, www.unodc.org/pdf/criminal_justice/United_Nations_Rules_for_the_Protection_of_Juveniles_Deprived_of_their_Liberty.pdf
5. United Nations – Guidelines for the Prevention of Juvenile Delinquency (The Riyadh guidelines), General Assembly, resolution 45/112 of 14 December 1990, www.un.org/documents/ga/res/45/a45r112.htm
6. United Nations, Standard Minimum Rules for Non-custodial Measures (Tokyo Rules), Adopted by General Assembly resolution 45/110 of 14 December 1990, www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/tokyorules.pdf
7. Guidelines for action on children in the criminal justice system (Vienna Rules), UN Economic and Social Council, Resolution 1997/30, www.un.org/documents/ecosoc/res/1997/eres1997-30.htm
8. United Nations, ECOSOC, Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime (ECOSOC, resolution 2005/20 of July 22, 2005), www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf
9. United Nations, Guidance note of the United Nations Secretary General: UN approach to justice for children, September 2008. www.unodc.org/pdf/criminal_justice/Guidance_Note_of_the_SG_UN_Approach_to_Justice_for_Children.pdf
10. United Nations, Guidelines for the Alternative Care of Children. General Assembly, resolution 64/142, 24 February 2010, www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf
11. Human Rights Council, Human rights in the administration of justice, in particular juvenile justice, 2011, Resolution 18/12, http://srsg.violenceagainstchildren.org/sites/default/files/documents/docs/A_HRC_ES_18_12%20_Eng.pdf
12. Committee on the Rights of the Child, General comment No. 9 – The rights of children with disabilities. 43rd session, Geneva, 11-29 September 2006, www.refworld.org/docid/461b93f72.html

13. Committee on the Rights of the Child, General Comment No. 10 - Children's rights in juvenile justice. 44th session, Geneva, 15 January – 2 February 2007, www.refworld.org/docid/4670fca12.html
14. Committee on the Rights of the Child, General comment No. 12 – The right of the child to be heard. 51st session, Geneva, 25 May – 12 June 2009, www.refworld.org/docid/4ae562c52.html
15. Committee on the Rights of the Child, General comment No. 14 – The right of the child to have his or her best interests taken as a primary consideration. 62nd session, Geneva, 14 January – 1 February 2013, www.refworld.org/docid/51a84b5e4.html
16. Recommendation CM/Rec (2008)11 of the Committee of Ministers to member states on the European Rules for juvenile offenders subject to sanctions or measures, www.unicef.org/tdad/councilofeuropejjrec08(1).pdf
17. Recommendation Rec (2003)20 of the Committee of Ministers to member states concerning new ways of dealing with juvenile delinquency and the role of juvenile justice, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805df0b3
18. Recommendation Rec(2005)5 of the Committee of Ministers to member states on the rights of children living in residential institutions, www.refworld.org/docid/43f5c53d4.html
19. Recommendation R (87) 20 of the Committee of Ministers to member states on social reactions to juvenile deliquency, http://archivio.transnazionalita.isfol.it/file/CoE_Rec_R87-20%20Eng.pdf
20. Guidelines of the Committee of Ministers of the Council of Europe on child-friendly justice (Adopted by the Committee of Ministers on 17 November 2010 and explanatory memorandum), https://rm.coe.int/16804b2cf3
21. IAYFJM – Guidelines on Children in Contact with the Justice System – 17.04.26 International Association of Youth and Family Judges and Magistrates. Report of the Committee appointed to propose Principles of judicial ethics for Youth and Family Judges and Magistrates, March 17, 2010. (Received and adopted by the General Assembly of the IAYFJM on April 24, 2010.), www.aimjf.org/download/Documentation_EN/AIMJF/Guidelines_-_ENG_-_Ratified_17.04.26.pdf
22. United Nations. Report of the Secretary-General: The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies (S/2004/616). 2004. http://archive.ipu.org/splz-e/unga07/law.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

որոնք պատրաստակամ են տրամադրել մասնագիտական ծառայություններ
երեխաներին մինչդատական և դատական վարույթներում

Կազմակերպության անվանումը: «ԱՐԵՎԱՄԱՆՈՒԿ» ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շահումյան 69
Հեռախոսահամար	+374 312/ 5 94 70
Էլեկտրոնային հասցե	arevamanuk@gmail.com; gmyurar@gmail.com
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական խորհրդատվություն Փորձագիտական եզրակացության պատրաստում
Կազմակերպության անվանումը: ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	ք.Երևան, Կարապետ Ուլնեցու փող., 64 շենք
Հեռախոսահամար	(37460) 540150
Թեժ գիծ.	0800-61111
Էլեկտրոնային հասցե	farz@far.am
Կայքէջ	www.farusa.org
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական Երեխայի խնամքի կազմակերպում Ժամանակավոր կացարանի տրամադրում Սոցիալական աշխատանքի ծառայություն
Կազմակերպության անվանումը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	ք.Երևան, Կարապետ Ուլնեցու փող., 64 շենք
Հեռախոսահամար	(+37460) 540150
Էլեկտրոնային հասցե	infoaasw@gmail.com
Կայքէջ	www.aasw.org
Մասնագիտական ծառայության տեսակը:	Սոցիալական աշխատանքի ծառայություն
Կազմակերպության անվանումը: «ԸՆՏԱՆԻՔ և ՀԱՄԱՅՆՔ» ՀԿ	

Կոնտակտային տվյալներ	
Հասցե	Արմավիրի մարզ, ք. Մեծամոր,
Հեռախոսահամար	+37493 631 970
Էլեկտրոնային հասցե	familyandcomm@gmail.com
Կայքէջ	http://famcom.am
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական խորհրդատվություն Սոցիալական աշխատանքի ծառայություն
Կազմակերպության անվանումը: ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ	
Կոնտակտային տվյալներ	
Հեռախոսահամար	+37477 991 280
Թեժ գիծ.	0 8000 12 80
Էլեկտրոնային հասցե	sacc.arm@gmail.com
Կայքէջ	www.saccarmenia.org
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական Փաստաբանական Բուժական հաստատություն ուղղորդում
Կազմակերպության անվանումը: ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	ք. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1
Հեռախոսահամար	+37495 004 186; +37460 491 001
Էլեկտրոնային հասցե	info@cdf.am
Կայքէջ	http://cdf.am
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական ծառայություն Լոգոպեդական ծառայություն Հատուկ կրթության մանկավարժի ծառայություն Սոցիալական աշխատանքի ծառայություն
Կազմակերպության անվանումը: «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	ք. Երևան, Դեմիրճյան 40
Հեռախոսահամար	+37410 523 061
Էլեկտրոնային հասցե	socialjusticengo@gmail.com
Մասնագիտական	Սոցիալական աշխատանքի ծառայություն

ծառայության տեսակը:	Փորձագիտական եզրակացության պատրաստում Հոգեբանական
Կազմակերպության անվանումը: «ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ	
Կոնտակտային տվյալներ	
Հասցե	ք. Երևան, Մովսես Խորենացու 162ա
Հեռախոսահամար	+37410 574 406
Էլեկտրոնային հասցե	info@lawinstitute.am
Մասնագիտական ծառայության տեսակը:	Հոգեբանական ծառայություն

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Bouamar v. Belgium: ECtHR 29 February 1988, Application no. 9106/80, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57445
2. T. v. the United Kingdom: ECtHR, 16 December 1999, Application no. 24724/94, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58593
3. S.C. v. the United Kingdom: ECtHR, 15 June 2004, Application no. 60958/00, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61826
4. Salduz v. Turkey: ECtHR, 27 November 2008, Application no. 36391/02, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-89893
5. Panovits v. Cyprus: ECtHR 11 December 2008, Application no. 4268/04, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-90244
6. Güveç v. Turkey: ECtHR, 20 April 2009, Application no. 70337/01, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-90700
7. Panovits v. Cyprus, 11 December 2008, Application no. 4268/04 http://hudoc.echr.coe.int/eng?i=001-90244
8. Adamkiewic v. Poland, 03 March 2010, Application no. no. 54729/00 http://hudoc.echr.coe.int/eng?i=003-3047306-3370597
9. Dushka v. Ukraine, 03 February 2011, Application no. 29175/04, http://hudoc.echr.coe.int/eng-press?i=003-3424099-3846343

ԲԱԺԻՆ 2.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.....60

Մաս 1. Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջազգային փորձ.....62

1.1 Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացի կազմակերպման պրոցեսուալ առանձնահատկությունները միջազգային պրակտիկայում.....62

1.2 Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացի կազմակերպման մարտավարական ու էթիկական նորմերը միջազգային պրակտիկայում.....64

Մաս 2. Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների անցկացման հոգեբանական մոտեցումները և սկզբունքները.....66

2.1 Դատական ու մինչդատական գործընթացներում անչափահասների քննության անցկացման պրոցեսուալ առանձնահատկությունները (տարածության, ժամանակի, ժամակարգի յուրահատկություն).....66

2.2 Դատական ու մինչդատական գործընթացներում անչափահասների քննության անցկացման ռազմավարական, մարտավարական և էթիկական սկզբունքները.....67

Մաս 3. Անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վկայությունների և ցուցմունքների ձևավորման գործընթացի վրա.....74

3.1 Անչափահասների հոգեկան զարգացման պարբերացումը և դրա նշանակությունը հարցաքննության ռազմավարության և մարտավարության ձևավորման վրա.....74

3.2 Հարցաքննության իրականացման ընթացքում դեռահասության հոգեբանական առանձնահատկությունների դերը.....76

3.3 Մանկահասակ երեխաների տեղեկության ընկալման և փոխանցման հոգեբանական հնարավորությունները (երևակայություն, ընկալում).....79

Մաս 4. Գործնական առաջարկներ անչափահասների հետ աշխատանքի արդյունավետության ապահովման.....83

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ.....85

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....87

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Սույն բաժնում ամփոփվում է դատավորների և դատախազների պարտականությունները և պատասխանատվությունը անչափահաս երեխաների՝ որպես տուժածների և հանցագործության վկաների հարցաքննության անցկացման հոգեբանական առանձնահատկությունները:

Անչափահաս երեխաների՝ որպես տուժածների և հանցագործության վկաների հարցաքննության անցկացումը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով: Անչափահաս տուժածների և վկաների հարցաքննությունը կարող է անցկացվել ինչպես նախաքննության փուլում, այնպես էլ դատական նիստերի ժամանակ: Ուստի շատ կարևոր են և՛ դատախազների, և՛ դատավորների մասնագիտացված վերապատրաստումները երեխաների հետ աշխատելու հմտությունների և կարողությունների ձևավորման նպատակով: Մինչ օրս ՀՀ-ում չեն գործում երեխաների հետ աշխատող հատուկ մասնագիտացված դատախազներ և դատավորներ. հաճախ նման քրեական գործերը հանձնվում են մեծ աշխատանքային փորձ ունեցող հմուտ մասնագետներին: Նման մոտեցումը իհարկե որոշակի բարդություններ է առաջացնում քրեական գործի քննության ամբողջ ընթացքում, քանի որ անչափահասների հետ աշխատանքը պահանջում է յուրահատուկ մոտեցում նրանց՝ հաշվի առնելով հոգեկան հատկությունների և գործընթացների զարգացման տարիքային առանձնահատկությունները:

Անչափահասների հարցաքննությունից հնարավորության դեպքում պետք է խուսափել, եթե առկա են այլ բավարար ապացույցներ, քանի որ ինքնին հարցաքննությունը հանդիսանում է ուժեղ սթրեսածին գործոն, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի դեռ չձևավորված հոգեկանի վրա: Սակայն լինում են դեպքեր, երբ անչափահասների տված վկայությունները դառնում են անհրաժեշտ պայման արդար դատական որոշման ընդունման համար: Բացի այդ, կարևոր է այն, որ անչափահաս տուժած կամ վկա հանդիսացող անձանց նկատմամբ երբեմն ձևավորվում է սխալ պատկերացում առ այն, որ նրանք իրենց պասիվ վարքով նպաստում են հանցագործության իրականացմանը:

Կարելի է ենթադրել, որ վկա կամ տուժած կարգավիճակից վերածվում են մեղադրյալի՝ տեղի է ունենում երկակի վիկտիմիզացիա: Ֆրանսիացի գիտնական Էնն Տենբրուսելը մատնանշում է, որ դատաիրավական դաշտի աշխատակիցների՝ տարբեր իրավիճակներում իրենց վարքի մասին սեփական պատկերացումների և ունակությունների ճանաչումը, հստակության բարձրացումը կարող են հիմք հանդիսանալ այլ մարդկանց նկատմամբ մեղադրանքի աստիճանի նվազման համար: Այլ կերպ ասած, երբ դատավորը, դատախազը կամ ուղղակի դիտորդը

գիտակցի իր վարքի պասիվությունը որևէ այլ իրավիճակում, նա մեղադրական դիրքորոշում չի ունենա վկայի կամ տուժածի նկատմամբ:

Հատկապես երկակի վիկտիմիզացիան դիտվում է սեռական բնույթի հանցագործությունների ժամանակ, երբ տուժածը դիտարկվում է որպես հանցագործության հրահրող՝ իր պասիվ վարքով: Վերոնշյալի հիման վրա կարելի է ենթադրել, որ դատահիրավական դաշտի աշխատակիցների ինքնաճանաչումը նույնպես նպաստում են դատավարական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ դատական համակարգի առանցքային գործառույթներից է հանդիսանում ուսումնասիրել երեխաների հետ անցկացվող դատավարական գործընթացների առանձնահատկությունները՝ շեշտը դնելով ինչպես այդ գործընթացների պրոցեսուալ բնութագրերին, այնպես էլ անչափահասների հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական տարիքային առանձնահատկություններին, դատահիրավական դաշտի աշխատակիցների ինքնաճանաչման և հաղորդակցման հմտություններին:

Սույն ձեռնարկում զետեղված են անչափահասների մասնակցությամբ դատավարական գործերի միջազգային փորձի վերաբերյալ փաստերը, ինչպես նաև անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացների անցկացման հոգեբանական մոտեցումները և սկզբունքները, անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վկայությունների և ցուցմունքների ձևավորման գործընթացի վրա, դատավարական գործընթացում կիրառվող հոգեբանական գործիքակազմը, դրանց կիրառման նկարագրությունը և ստացված արդյունքների հոգեբանական վերլուծությունը, ինչը նշանակալի ներդրում կունենա գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

ՄԱՍ 1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1. Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացի կազմակերպման պրոցեսուալ առանձնահատկությունները միջազգային պրակտիկայում

Անչափահասների և երեխաների մասնակցությամբ դատական և մինչդատական գործընթացների պրոցեսուալ նորմերի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում անցկացման վայրը, պայմանները, ժամակարգը և հոգեբանի, մանկավարժի կամ այլ օգնող անձնակազմի մասնակցությունը: Հանցագործության վկա կամ տուժած երեխաների, անչափահասների հետ աշխատանքի ժամանակ շատ կարևոր է այն անցկացնել նրանց համար հարմարավետ պայմաններում՝ հնարավորինս բացառելու սթրեսածին գործոնների ազդեցությունը: Հայտնի է, որ շատ երկրներում երեխաների հարցաքննությունը անցկացվում է ոստիկանությունից, դատախազությունից և դատարանից դուրս հատուկ հարցաքննությունների համար նախատեսված համապատասխանորեն կահավորված սենյակներում: Այսպես, օրինակ, Մոլդովայում երեխաների քննության համար նախատեսված սենյակները կահավորված են տեսաձայնագրման սարքավորումներով և միակողմանի հայելիներով: Ընդ որում, քննության մասնակիցները գտնվում են սենյակի դիտարկումային մասում, և երեխային ուղղված հարցը տրվում է միայն վերաձևակերպումից հետո հատուկ մասնագետի կողմից, մասնավորապես հոգեբանի կամ սոց. մանկավարժի՝ ձևակերպելով հարցը երեխայի համար մատչելի և հասկանալի ձևով:

Նմանանտիպ փորձ գրանցվում է մի շարք սկանդինավյան և եվրոպական երկրներում[82], որտեղ հարցաքննությունը անցկացվում է «Երեխաների համար նախատեսված տներ»-ում: Դանիայում երեխային հարցեր կարող են տալ միայն հատուկ մասնագիտացված հոգեբանները կամ սոցմանկավարժները: Ավստրիայում, ընդհանրապես, մինչև 14 տարեկան երեխան չի մասնակցում դատական պրոցեսին, այլ դատի ժամանակ դիտվում են նախօրոք կատարված տեսաձայնագրությունները: Հարցերը, որոնք առաջանում են դատական գործընթացի ժամանակ, նույնպես տրվում են տեսաձայնագրության միջոցով: Նմանատիպ փորձ գրանցվում է նաև Շվեդիայում, որտեղ գտնում են, որ անչափահասը չպետք է հայտնվի դատարանում՝ ավելորդ սթրեսից ապահովագրելու համար: Ֆրանսիայում նույնպես հարցաքննության տեսաձայնագրառման ժամանակ պետք է ներկա գտնվի հոգեբանը կամ բժիշկը,

[82] Տես էջ 54, 4-րդ բաժնի երկորրդ ենթակետը(պոզիտիվ պրակտիկա)

կամ դատավորի կողմից նշանակված այլ անձ: Անգլիայում տուժած կամ վկա անչափահասի ցուցմունքները նույնպես տրվում են դատական նիստերի դահլիճից դուրս, որը դատի ժամանակ ցուցադրվում է տեսաձայնագրությամբ: Ընդ որում, տեսաձայնագրության ցուցադրման ժամանակ գործով այլ կողմերը դուրս են գալիս դատական նիստերի դահլիճից [9]:

Բացի տարածական կազմակերպումից, բացառիկ կարևորություն են ներկայացնում անցկացման ժամանակային բնութագրերը՝ տևողությունը, անհրաժեշտության դեպքում՝ ընդմիջումները, դադարները: Ոչ մի դատական գործընթաց, առավել ևս երեխաների և անչափահասների մասնակցությամբ չի կարելի անցկացնել առանց նախօրոք պլանավորման և նախապատրաստման: Ընդ որում, դատական և մինչդատական գործընթացներին նախապատրաստվելու ժամանակը գրեթե միշտ լինում է հակադարձ համեմատական բուն դատավարական գործընթացի անցկացման ժամանակին: Այսինքն, որքան շատ ժամանակ է ծախսվում նախապատրաստական փուլերում, այնքան ավելի շատ տեղեկություն կարելի է ստանալ և պատշաճ կազմակերպել հարցաքննությունը՝ դրանով իսկ կրճատելով բուն դատավարական գործընթացի իրականացման ժամանակը:

Յուրաքանչյուր դատական գործ ինքնատիպ է, սակայն երեխաների և անչափահասների մասնակցությամբ մինչդատական և դատական գործընթացները ներառում են մի շարք ընդհանուր սկզբունքներ և մոտեցումներ: Մասնավորապես, դատավարական գործընթացի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել՝

1. Երեխայի կամ անչափահասի տարիքային և սեռային առանձնահատկությունները,
2. Երեխայի կամ անչափահասի զգայական, իմացական, հուզական, կամային ոլորտների զարգացման առանձնահատկությունները,
3. Սոցիալական կարգավիճակը և խոցելիությունը,
4. Անհատական ոճը և այլն:

Հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունները՝ կազմվում են նախնական հարցերի պլանը, հարցադրումների ձևը, քանակը, բովանդակությունը, ինչպես նաև արտաքին պայմանները, սենյակի մեկուսացվածությունը, լուսավորությունը, դատավորի կամ դատախազի վերաբերմունքը և այլն:

1.2. Անչափահասների մասնակցությամբ դատավարական գործընթացի կազմակերպման մարտավարական և էթիկական նորմերը միջազգային պրակտիկայում

Ակնհայտ է, որ երեխաների և անչափահասների հետ աշխատող դատավորներին և դատախազներին բնութագրական պետք է լինեն բարձր համամարդկային, հումանիստական, քաղաքական և բարոյական արժեքները, որոնք հնարավորություն կընձեռեն հնարավորինս քիչ հոգեբանական և սոցիալական վնաս պատճառելով անցկացնել դատավարական գործընթացները: Ինչպես արդեն բազմիցս նշել ենք, երեխայի և/կամ անչափահասի մասնակցությունը մինչդատական և դատավարական գործընթացին հանդիսանում է ուժեղ սթրեսածին գործոն: Ուստի անհրաժեշտ է աշխատել պահպանել էթիկական և տակտիկական նորմերը այդ բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Ընդ որում, մինչդատական և դատական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դատավորի, դատախազի պրոֆեսիոնալիզմի մակարդակից, հոգեբանական պատրաստվածության և հատուկ մարտավարական ծրագրի իրագործումից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչդատական գործընթացը կատարում է 3 հիմնական գործառույթներ՝ կոմունիկատիվ, ճանաչողական և հաստատող, այն բարձր պահանջներ է ներկայացում դատախազի կամ դատավորի համապատասխանաբար հաղորդակցման, մտավոր, հումանիստական, իրավական կրթվածության առանձնահատկություններին: Տարբեր երկրներում կիրառվում են անչափահաս տուժածների կամ վկաների հարցաքննության տարբեր մոդելներ, սակայն բոլոր այդ մոդելների հիմքում ընկած են մի շարք ընդհանրություններ: Այսպես, օրինակ, կարևոր է նախնական հարցազրույցը անցկացնել երեխաների հետ հնարավորինս արագ՝ տվյալ իրավիճակը ընկալելուց հետո:

Այն դեպքերում, երբ իրադարձությունը շատ է հուզել երեխային, նպատակահարմար է նախնական հարցազրույցը անցկացնել 2-3 օր անց: Այդ ընթացքում թուլանում է լարվածությունը, և, որպես հետևանք, հիշողության արգելակումը: Անչափահասը այս ընթացքում կարող է հիշել բոլոր այն մանրուքները, որոնք կարևոր են տվյալ գործի համար: Միևնույն ժամանակ, իրադարձությունից 10-15 օր անց անչափահասը կարող է մոռանալ որոշ կարևոր հանգամանքներ, եթե դրանք հատուկ հետաքրքրություն չեն առաջացրել տուժած կամ վկա հանդիսացող անչափահասի մոտ: Էթիկական նորմերի մեջ կարելի է նշել նաև այն, որ չի թույլատրվում հանրությանը ներկայացնել մինչդատական կամ դատական գործընթացում տրված վկայությունները:

Մինչդատական գործընթացի ճիշտ կազմակերպումը հնարավորություն է ընձեռում մեկ հարցաքննության ժամանակ ստանալ սպառիչ տեղեկություն, և ձերբազատել վկա կամ տուժող հանդիսացող անչափահասին կրկնակի հարցաքննություններից: Կրկնակի հարցաքննությունների ժամանակ տուժողը կամ վկան կարող է հիշել ոչ թե իրադարձությունը, այլ այն, թե ինչ է պատմել նախնական քննության ժամանակ: Այսինքն, կարելի է ասել, որ կրկնակի հարցաքննությունը ոչ թե օգնելու է մանրամասները վերհիշելուն, այլ հակառակը՝ կարող է երևակայական տեղեկության աղբյուր դառնալ, հատկապես մանկահասակ երեխաների դեպքում:

Որպեսզի առաջին իսկ հարցաքննությունից դատավորը կամ դատախազը ստանան սպառիչ տեղեկություններ, անհրաժեշտ է մինչ այդ տեղեկացված լինել անչափահասի հոգեբանական, անհատատիպաբանական, սոցիալական, կրոնական, մշակութային առանձնահատկությունների մասին և հաշվի առնելով այդ առանձնահատկությունները՝ պատրաստվել հարցաքննությանը: Անհրաժեշտության դեպքում դիմում են հոգեբանի կամ սոցիալական մանկավարժի օգնությանը՝ հարցերը պատշաճ ձևակերպելու համար:

ՌԴ-ում գործող օրենքի համաձայն՝ երբ կասկած է առաջանում տուժածի կամ վկայի՝ իրադարձության ադեկվատ ընկալման մեջ իր տարիքային և անհատատիպաբանական առանձնահատկություններից ելնելով, պարտադիր է համարվում դատահոգեբանական փորձաքննության նշանակումը: Ընդ որում, որպես կասկածի աղբյուր կարող են հանդես գալ տուժածի կամ վկայի տարիքը, մտավոր զարգացվածության աստիճանը, խոսքի զարգացվածությունը, ընկալման պայմանները, իրադարձության ժամանակ տուժածի կամ վկայի հոգեկան վիճակը և այլն [8, 11, 12]: Դրա հետ մեկտեղ, մի շարք եվրոպական և սկանդինավյան երկրներում չի թուլատրվում երեխայի անմիջական մասնակցությունը դատական գործընթացին: Նրա տված վկայությունները տեսաձայնագրվում են և փակ, փաթեթավորված վիճակում փոխանցվում դատարանի, որտեղ պահվում են գործի մյուս նյութերի հետ միասին:

ՄԱՍ 2. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Դատական և մինչդատական գործընթացներում անչափահասների քննության անցկացման պրոցեսուալ առանձնահատկությունները (տարածության, ժամանակի, ժամկարգի յուրահատկություն)

Երեխաների և անչափահասների մասնակցությամբ մինչդատական և դատական գործընթացների արդյունավետ իրականացման համար նշանակալի տեղ է զբաղեցնում դրա պրոցեսուալ առանձնահատկությունների իմացությունը և կիրառումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաների և անչափահասների համար նման գործընթացներին մասնակցությունը հանդիսանում է սթրեսածին գործոն, անհրաժեշտություն է առաջանում մշակել համալիր ծրագիր՝ ներառելով անցկացման տարածաժամանակային բնութագրերը: Երեխաների և անչափահասների մասնակցությամբ մինչդատական և դատական գործընթացների իրականացման վայրը պետք է ընտրվի դատախազությունից, ոստիկանությունից դուրս՝ նեյտրալ տարածքում, որն իր կառուցվածքով պետք է չհիշեցնի նման կառույցները: Այսինքն, վայրը և տեղը պետք է հագեցած լինեն բաց գույներով, լայն պատուհաններով և այլն: Անհրաժեշտ է նաև, որ հարցաքննողը և դիտորդները գտնվեն միակողմանի հայելապատ քննասենյակից դուրս:

Մյուս կարևոր գործոնը, որն անհրաժեշտ է հաշվի առնել, ժամանակն է: Նախ և առաջ ժամկարգը՝ հարցաքննությունը չպետք է գերազանցի 1 ժամը՝ բացառելու համար հոգնածությունը: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում պետք է տալ ընդմիջումներ, որոնց քանակը կարգավորվում է ըստ հարցաքննվողի պահանջի:

Մինչև երեխաների հետ հարցազրույցը սկսելը կարևոր քայլերից է համարվում դրա պլանավորումը՝ հարցաքննության ժամանակահատվածը հնարավորինս կրճատելու համար: Ընդ որում, հարցաքննության անցկացման ժամանակ պետք է հաշվի առնել հանգստի համար նախատեսված ընդմիջումները: Մյուս կողմից, կարևորվում է նաև այն, որ երեխային պետք է քննել մինչև համապատասխան տեղեկության ստանալը, որից հետո իրավունք չկա շարունակելու երեխային ենթարկել սթրեսային ազդեցություններին: Միևնույն ժամանակ մեծամասամբ ճիշտ պլանավորված և կազմակերպված առաջին իսկ զրույցի ժամանակ կարելի է ստանալ սպառիչ տեղեկություններ: Հաջորդիվ հանդիպումները կարող են աղավաղվել տարբեր պատճառներով, նախ և առաջ ժամանակի հետ միասին տուժածի կամ վկայի հիշողությունից դուրս են մղվում մանրուքները, մյուս կողմից անչափահաս վկան կամ տուժածը կարող է արդեն

սկսել երևակայել: Բացի այդ, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, յուրաքանչյուր հարցաքննություն անչափահաս տուժածի կամ վկայի համար համարվում է ուժեղ սթրեսածին գործոն: Ուստի սրանից հետևություն՝ դատական գործընթացում անչափահաս տուժած կամ վկա հանդիսացող անձից վկայություն վերցնելու համար որոշիչ է նախապատրաստական փուլը:

Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր դեպքը եզակի է և ինքնատիպ, հարցաքննության պլանավորումը ենթադրում է մի շարք ընդհանրություններ: Առաջինը, ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել, երեխայի պատրաստակամությունն է համագործակցելու, երկրորդ հերթին կարևորվում են երեխայի կարիքները և պահանջները, երրորդը՝ երեխայի սոցիալական, հոգեբանական և ֆիզիկական զարգացման տարիքային առանձնահատկությունները, չորրորդը՝ հանցագործության բնույթը, վկայության դեպքում կասկածյալների հետ բարեկամական և հոգևոր կապը, և, ի վերջո, յուրաքանչյուր երեխային համապատասխան հարցաքննության ոճը և ձևը:

Վերոնշյալ առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները և, հետևապես, հմտությունները և կարողությունները հնարավոր է ձեռք բերել նպատակային ուսուցման ընթացքում: Ուսուցման թիրախային օբյեկտը երեխաների հետ հաղորդակցվելու հմտություններն են, ինչպես նաև տարբեր հոգեկան գործընթացների, հատկությունների և վիճակների տարիքային առանձնահատկությունների ուսուցումը [օր.՝գրականության ցանկ N8]:

2.2. Դատական և մինչդատական գործընթացներում անչափահասների քննության անցկացման ռազմավարական, մարտավարական և էթիկական սկզբունքները (հարցադրումները, մատչելիությունը, միջնորդ հոգեբանի կամ մանկավարժի առկայությունը, հարցադրումների ձևակերպման տարիքային համապատասխանությունը, դատախազների և դատավորների հաղորդակցման հմտությունները համապատասխան տարիքային խմբի անչափահասների հետ)

Հարցաքննությունը հաղորդակցման ձևերից մեկն է և ենթարկվում է հաղորդակցման ընդհանուր կանոններին, չնայած նրան, որ օժտված է ինքնատիպ յուրահատկություններով, որոնց մեջ հարկավոր է նշել այն, որ հանցագործությունից տուժածը հաղորդակցման մեջ ցուցաբերելու է պահանջատիրական մոտեցում, իսկ վկան՝ վրդովված, զայրացած, նույնիսկ աֆեկտիվ վիճակում կարող է գտնվել:

Հանցագործության տուժածների և վկաների հարցաքննության արդյունավետության (ինչը ենթադրում է անհրաժեշտ փաստերի արձանագրում և երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգեբանական առողջության պահպանումը)

ապահովման համար առաջին կարևոր քայլերից է հանդիսանում կոնտակտի հաստատումը: Կոնտակտի հաստատման համար անհրաժեշտ է հաշվի առնել անչափահասի համոզմունքները, արժեքները, մշակութային, ազգային, կրոնական և այլ առանձնահատկություններ՝ հնարավորինս մոտեցնելով հաղորդակցման ոճը անչափահասի ոճին [12]:

Ինչպես արդեն նշել էինք, հարցադրումների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի տարիքային, սեռային, կրոնական, ազգային, սոցիալական առանձնահատկությունները՝ առավելագույնս համապատասխանեցնելով նրա համոզմունքներին և ավանդույթներին: Բացի այդ, երեխայի մոտ մեղքի զգացման առաջացումից խուսափելու համար անհրաժեշտ է նրան բացատրել քննվող գործի կարևորությունը, դրա չբացահայտելու դեպքում՝ բացասական հետևանքները: Հակառակ դեպքում երեխան կարող է իրեն մեղավոր ճանաչել այլ մարդու՝ ծանոթ կամ անծանոթ, ազատազրկման համար:

Հաջորդ կարևոր կետը, որն անհրաժեշտ է հաշվի առնել, այն է, որ երեխային պետք է լսել ուշադրությամբ և շահագրգռվածությամբ, նույնիսկ, եթե նա հարցազրույցի ընթացքում շեղվում է գործի բուն էությունից, ազատ և անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու համար:

Հարցումը առավել տարածված հոգեբանական մեթոդներից է: Հարցման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտության ժամանակ կարևորն ընդհանրական պատկերն է, այլ ոչ թե կոնկրետ հարցվողի պատասխանը: Սրանով էլ հարցման մեթոդը տարբերվում է հարցազրույցից, որտեղ կարևոր է հենց հարցազրույց տվող մարդու տեսակետը:

Հարցազրույցի մեթոդը դասվում է որակական մեթոդների շարքին: Հարցազրույցի ժամանակ կարևոր է հոգեբանի կամ սոց. մանկավարժի անմիջական և ազատ շփումը տուժածի հետ, որի շնորհիվ բացահայտվում է տուժածի կամ վկայի դիրքորոշումը ուսումնասիրության երևույթի նկատմամբ:

Անհատական մասնակի ստանդարտացված զրույցը կիրառվում է որպես դիագնոստիկ(գնահատող) մեթոդ, որը թույլ է տալիս կոնտակտ հաստատել անչափահասի հետ, ստանալ նրա սուբյեկտիվ վերապրումների, վարքի մոտիվների, հավակնությունների մակարդակի, ինչպես նաև անձնային խնդիրների մասին տեղեկություն: Սովորաբար զրույցի մեթոդը կիրառվում է որպես օժանդակ մեթոդ այլ հոգեբանական մեթոդների հետ միասին, որոնք ուղղված են անձի հոգեկան վիճակների, վարքի առանձնահատկությունների հայտնաբերմանը: Զրույցի անցկացման արդյունավետությունը պայմանավորում է վստահության և բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը, որը մեծացնում է այլ դատական գործընթացի արյունավետությունը: Ընդ որում, զրույցի ընթացքը կախված է հարցադրումների ոճից և ձևից: Տարբերում են բաց, փակ և

հայելային հարցեր, որոնք կիրառվում են հարցազրույցի ժամանակ: Բարիդրացիական մթնոլորտի ստեղծման ակնկալիքով անհրաժեշտ է հարցազրույցը սկսել բաց հարցերով, որոնք ուղղված են հարցվողների կարծիքը, մոտեցումը, տեսակետը իմանալուն: Փակ հարցերը խոչընդոտում են հարցազրույցի հետագա զարգացմանը, ուստի դրանց պետք է դիմել ոչ հաճախակի և միայն ճշտումներ կատարելու համար: Միևնույն ժամանակ առավել արդյունավետ են դատական գործընթացում հայելային հարցերի կիրառումը, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ պարզ և բարդ: Պարզ հայելային հարցերի ժամանակ հարցաքննողը կրկնում է հարցաքննվողի միտքը իր իսկ բառերով:

Օրինակ. բարդ հայելային հարցերի ժամանակ հարցաքննողը կրկնում է իր ընկալածը սեփական բառերով: Մեկ այլ դասակարգման համաձայն, տարբերում են հարցադրումների մի քանի տեսակներ՝

1. Խթանող հարցեր
2. Ուղղորդող հարցեր
3. Ճշտող
4. Հիշեցնող
5. Մանրամասնող
6. Հակադրող:

Անընդունելի են համարվում ուղղորդող հարցերը:
Ուղղորդող հարցի օրինակ է.

-Տեսե՞լ եք արդյոք, թե ինչպե՞ս է սև մուշտակով և կապույտ տաբատով ցածրահասակ, սևահեր տղամարդը դուրս գալիս շքամուտքից և հարձակվում նրա (X-ի) վրա:

Դրա փոխարեն հարցադրումը պետք է հետևյալ բնույթ ունենա.

-Որևէ մեկը մոտեցել է արդյո՞ք տուժածին (X-ի), և, եթե այո, ապա ո՞վ: Եթե չեք ճանաչում այդ մարդուն խնդրում եմ նկարագրեք նրա արտաքինը, տարիքը և գործողությունները:

Հստակեցնող հարցերի դեպքում նույնպես կարող են առաջանալ բարդություններ, երբ նախադասությունը կազմված երկու իմաստային բաժիններից:

Օրինակ.
Տեսե՞լ ես ինչպես է "X"-ը ("Իկսը") դուրս եկել տուժածի տանից և նստել «BMV» մակնիշի սպիտակ մեքենան:

Նմանատիպ հարցադրման ժամանակ «այո» կարող է մեկնաբանվել որպես համաձայնություն հարցի երկու մասերի վերաբերյալ: Ուստի հարցադրումը պետք է ունենա հետևյալ տեսքը.

Օրինակ.
Տեսե՞լ եք ինչպես է Իկայանը նստում «BMV» մակնիշի սպիտակ մեքենան, և եթե այո, ապա որտեղից նա դուրս եկավ:

Հարցաքննության ժամանակ բացի ճիշտ հարցադրումներից, կարևորվում է նաև լսելու ունակությունը: Չնայած այս հանգամանքին, հայտնի է, որ մարդկության մեծամասնությունը ի վիճակի չէ լսել դիմացինին, ինչից էլ կարող են սկսել խնդիրները, կոնֆլիկտները, սխալները:

Գոյություն ունեն լսելու 2 տեսակ՝ ռեֆլեքսիվ և ոչ ռեֆլեքսիվ: Ռեֆլեքսիվ լսելու ժամանակ կիրառում են հետևյալ ձևերը՝ պարզաբանում, վերաձևակերպում, զգացողությունների արտացոլում և ամփոփում: Պարզաբանման ժամանակ տրվում են հետևյալ հարցերը կամ պնդումները "*ես չհասկացա, ի՞նչ ասացիք……..": Վերաձևակերպումները կարելի է սկսել հետևյալ բառերով "Դուք կարծում եք, որ…": Զգացողությունների արտացոլումը դրսևորվում է հետևյալ նախադասություններում՝ "կարծես թե, Դուք մի փոքր հուզված եք…., վրդովված եք…… և այլն": Եվ, վերջապես, ամփոփումը կարելի է արտահայտել այսպես՝ "Որքան ես հասկացա, Ձեր ասածը սա էր նշանակում……":*

Դրա հետ մեկտեղ հանդիպում են նաև լսելու տարածված սխալներ՝ զրուցակցին ընդհատել, հապճեպ եզրակացություններ անել, հապճեպ առարկություններ անել, անտեղի խորհուրդներ տալ և այլն, որոնցից հնարավորինս պետք է խուսափել:

Հարցազրույցի անցկացման ժամանակ խոսքի արագությունը նույնպես ազդում է զրույցի ընթացքի վրա: Անհրաժեշտ է խոսել զրուցակցի տեմպին համապատասխան, հատկապես, երբ այն վերաբերում է երեխաներին:

Արդյունավետ հարցաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ գիտելիքների շարքում պետք է առանձնացնել տարիքի, սեռի, սթրեսի, արտակարգ և ճգնաժամային իրավիճակների, ինչպես նաև տուժածի հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները:

Արդյունավետ հարցաքննությունը անցկացնելու համար, բացի վերոնշյալ հմտություններից անհրաժեշտ է հաշվի առնել անչափահասի՝

1. Ինչ պայմաններում է ապրում և դաստիարակվում՝ ընտանիքի կառուցվածքը, ծնողների միջև հարաբերությունները, ծնող-երեխա հարաբերությունները, երեխայի նկատմամբ պատժի և խրախուսանքի մեթոդի կիրառումը, լինու՞մ են արդյոք տանը հյուրեր և ինչպե՞ս են իրենց դրսևորում երեխաների ներկայության ժամանակ, ու՞մ հետ է երեխան անցկացնում ազատ ժամանակը:
2. Բնավորության գծերը՝ շփվողականությունը, ամոթխածությունը, կոնտակտի մեջ մտնելու ունակությունը, ճկունությունը, տրամաբանողականությունը, զիջողականությունը, համեստությունը, սիրու՞մ է արդյոք լինել ուշադրության կենտրոնում, վարքի վերահսկումը, ինչպես են նրան վերաբերվում հասակակիցները և մեծահասակները և այլն,
3. Ինտելեկտուալ զարգացման առանձնահատկությունները և մակարդակը՝ մինչդպրոցական տարիքի երեխաների համար խոսքի ձևավորվածության մակարդակը, կարողանում է արդյո՞ք պատմել իր տեսածը կամ լսածը, տառաճանաչ է, թե՞ ոչ, ինչպե՞ս է շփվում հասակակիցների և մեծահասակների հետ և այլն,
4. Ֆիզիկական զարգացվածության մակարդակը. քրոնիկական հիվանդությունների առկայություն, ինֆեկցիոն հիվանդություններ, զգայարանների դեֆեկտներ,
5. Խոսքի արատներ՝ կակազում, վատ արտաբերում կամ այլ ֆիզիկական արատներ,
6. Ի՞նչ հուզական վիճակում է գտնվել երեխան հանցագործության ընկալման ժամանակ, օրինակ, վախեցած էր, հանգիստ էր և այլն, ինչո՞վ էր զբաղված այդ պահին՝ իրադարձության կենտրոնում էր թ՞ե դիտում էր հեռվից, ներգրավված էր իրադարձության մեջ,
7. Ինչո՞վ էր զբաղված, ինչպե՞ս է անցկացրել իրադարձության և հարցաքննության միջև ընկած ժամանակը: Այս փաստը կարևոր է հասկանալու, թե ինչպես են ազդել հետագա իրադարձությունները դրա ընկալման վրա,
8. Պատմե՞լ է արդյոք երեխան այդ իրադարձությունների մասին, և, եթե այո, ապա ո՞ւմ,
9. Քննարկել են արդյո՞ք մեծահասակները այդ իրադարձությունը երեխայի մոտ:

Դատավարական գործընթացի յուրաքանչյուր փուլում տվյալ գործով հարցաքննվողների նկատմամբ, և հատկապես անչափահասների մասնակցությամբ, պետք է ցուցաբերել հարգալից վերաբերմունք՝ պահպանելով նրանց արժանապատվությունը: Հարցադրումները պետք է ուղղված լինեն ոչ թե

անձին մեղադրելուն ուղղակի կամ անուղղակի, այլ տվյալ իրադարձությանը, դեպքին: Վերոնշյալը այն նշանակալի նորմատիվներից է, որը էականորեն ազդում է նրա վրա, թե ինչքանով անչափահասը կներգրավվի պրոցեսի մեջ և կտա սպառիչ տեղեկություն:

Օրինակ.

Առավել արդյունավետ հարցաքննություն անցկացնելու նպատակով անհրաժեշտ է հարցադրումները կատարել հստակ և պարբերաբար հստակեցնել, արդյո՞ք ճիշտ եք հասկացել տուժածի կամ վկայի ցուցմունքները:

Օրինակ՝, հարցաքննության ողջ ընթացքում պարբերաբար անհրաժեշտ է ճշտել տված տեղեկության աղբյուրների մասին; ի՞նչն է պատճառը, որ այդ մանրամասներն է հիշել՝ ինչո՞վ է տպավորվել և այլ:

Հարցաքննություն անցկացնելիս երբեմն անհրաժեշտություն է առաջանում դիմել հոգեբանի կամ սոցիալական մանկավարժի օգնությանը, երբ տուժած կամ վկա անչափահասը հրաժարվում է պատասխանել որևէ հարցի: Նույնիսկ երբեմն հնարավոր է փոխարինել հոգեբանին կամ սոց. մանկավարժին, եթե մասնագետը չի կարողանում կոնտակտ հաստատել անչափահասի հետ:

Դատական և մինչդատական գործընթացի կարևոր կետերից է հանդիսանում նաև հարցաքննության կանչելու ժամանակը: Այն անհրաժեշտ է նշանակել ոչ դպրոցի ժամերին, որպեսզի տվյալ գործին առնչությունը հայտնի չդառնա նրա շրջապատին, համադասարանցիներին, կուրսեցիներին և ընդհանրապես ընկերներին, զերծ պահել սոցիալական հնչեղությունից:

Հարցաքննության անցկացման ժամանակ, երբ դատավորը գրանցում է սուտ տեղեկություններ, պետք է փորձել պարզել սուտ խոսելու մոտիվները՝ կեղծ ընկերության գաղափարը, ամոթի զգացումը, վախի զգացումը, որը կարող է առաջացած լինել, եթե նրան վախեցրել են, ահաբեկել են: Մոտիվացիոն ոլորտի վրա ազդելով մեկտեղ դատավորը կամ դատախազը կարող է օգտագործել հոգեկան ներազդման թույլատրելի հնարքներ՝ իր տեղեկացվածությունը, ապացույցների ներկայացումը և այլն: Միևնույն ժամանակ հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել որոշ մանկավարժական պահանջներ՝ չֆիքսել անչափահասի ուշադրությունը այն հանգամանքների վրա, որոնք կարող են բացասաբար ազդել նրա դաստիարակության վրա, բացառել անբարոյական պահվածքը և այլն:

Օրինակ.

Հարցաքննությունը դրական ընթացք կունենա, եթե այդ ընթացքում շեշտավորվեն հարցաքննվողի դրական հատկությունները՝ սկզբունքայնությունը, ռիսկը, ազնվությունը և այլն:

-Ինչո՞ւ Դուք լինելով այդչափ սկզբունքային և ազնիվ, չեք ցանկանում որ, արդարությունը այս անգամ էլ հաղթի:

Դրա հետ մեկտեղ, դատավորի, դատախազի, հոգեբանի կամ սոց.մանկավարժի խոսքը նույնպես պետք է լինի հստակ, մատչելի, որոշ դեպքերում՝ սուր, կտրուկ: Ինչի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, դա այն է, որ տուժած կամ վկա հանդիսացող անչափահասի հետ չի կարելի ընկերական փոխհարաբերություններ ստեղծել՝ ցուցաբերելով հարգանք իր անձի նկատմամբ, բայց ոչ ընկերական հարաբերություններ:

ՄԱՍ 3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

3.1. Անչափահասների հոգեկան զարգացման պարբերացումը և դրա նշանակությունը հարցաքննության ռազմավարության և մարտավարության ձևավորման վրա:

Երեխաների հոգեկանի զարգացման տարիքային առանձնահատկությունները չեն հանդիսանում ոչ ֆիզիկական, ոչ էլ հոգեբանական թերություններ, ուստի իրենց տված վկայությունները կարող են համարվել հավաստի և ընդունելի: Երեխաների հոգեբանական առանձնահատկությունները անխոս ազդում են վկայությունների ձևավորման և տալու վրա, որոնք ստեղծում են դժվարություններ իրենց հետ աշխատող արդարադատության ոլորտի մասնագետների համար: Պետք է նշել, որ երեխաների հետ տարվող աշխատանքները դատավարական գործընթացներում ամենաքիչն են ստանդարտացված և մշակված: Մասնագետների մեծ մասը առաջնորդվում է կենցաղային գիտելիքներով և մեծ մասնագիտական փորձով:

Իրավական տեսանկյունից անչափահաս են համարվում 14 տարին չլրացած երեխաները, որոնց ըստ տարիքային պարբերացման համաձայն Դ. Էլկոնինի տեսության առանձնացնում են 4 խումբ՝

1. Փոքր և միջին նախադպրոցական տարիք՝ 3-4,5 տարեկան;
2. Ավագ նախադպրոցական տարիք՝ 4-7 տարեկան;
3. Վաղ դպրոցական տարիք՝ 6-7-ից 10-11 տարեկան;
4. Դեռահասության տարիք՝ 10-11 –ից 13-14 տարեկան:

Տարիքային պարբերացման առանձնահատկությունների իմացությունը անհրաժեշտ է մինչդատական և դատական գործընթացի կազմակերպման առաջին իսկ քայլերից սկսած:

Առաջինը, ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել, դա այդ տարիքի երեխաների մոտ իրականության և երևակայության սահմանների չձևավորվածությունն է: Համաձայն Ֆրոյդի և Պիաժեի ուսումնասիրությունների՝ մինչև 7-8 տարեկան երեխաների վկայությունները չեն կարող լինել հավաստի: Սակայն ժամանակակից հոգեբանների տեսանկյան համաձայն, այդ տարիքային խմբի երեխաների վկայությունը կարող ենք համարել հավաստի, եթե դրանք ստացվել են ճիշտ կազմակերպված հարցաքննության ժամանակ:

Օրինակ.

3,5 տարեկան երեխայի կցկտուր խոսքերից, երեխայի մայրը հասկացել է, որ իրենց տանից ոչ շատ հեռու մի անծանոթ տղամարդ վերցնելով նրան իր ձեռքերի վրա, տարել է շքամուտքի մյուս կողմը, մերկացրել և բռնաբարել: Երբ աղջիկը փորձել է բղավել, նա ամուր սեղմել է կոկորդից, ինչի մասին վկայել է դատահոգեբանական փորձաքննության արդյունքները:

Հարցաքննության ժամանակ քննիչը պարզել է, որ այդ տղամարդը բարձրահասկա էր, սև կոշիկներով, սև վերնաշապիկով և շականակագույն բաճկոնով: Բացի այդ աղջիկը նշել էր հանցագործի հեռանալու ուղղությունը: Մի քանի օր անց հանցագործը ձերբակալվել էր և տվել ինքնամեղադրական ցուցմունքներ:

Լինում են դեպքեր, երբ դատավորը կամ քննիչը կասկածելով 3-4 տարեկան երեխայի տված վկայություններում հաշվի չեն առնում նրանց ասածները: Սակայն երկակի հարցաքննության ժամանակ, երբ երեխաները հայտնում են մանրուքները, տեղիք են տալիս առավել լրջամտորեն մոտենալ նրանց տված վկայություններին:

Օրինակ.

Անծանոթ տղամարդը բռնաբարել է 4 տարեկան երեխային: Հանցագործության մեջ մեղադրվող տղամարդը ձերբակալվել է, որին ճանաչել է երեխան: Սակայն տղամարդը ունեցել է ալիբի, ինչի պատճառով քննիչը կասկածել է երեխայի տված վկայությունում: Սակայն երկրորդ հարցաքննության ժամանակ, երեխան հայտնել է, որ այդ տղամարդու աջ ձեռքին եղել արևի նման դաջվածք, իսկ ձախ դաստակի վրա ծաղիկներ: Կասկածյալի ձեռքերի վար հայտնաբերվել են նմանատիպ դաջվածքներ:

Նման օրինակներից պարզ է դառնում, որ նույնիսկ 3-4 տարեկան երեխաները երբեմն կարող են ճշգրիտ տեղեկություններ հայտնել իրավապահ մարմիններին: Այստեղ կարևորվում է երեխայի վստահությունը քննիչի կամ դատավորի նկատմամբ: Փորձը ցույց է տալիս, որ հարցաքննությունների ռազմավարության և մարտավարության ձևավորման վրա նշանակալի տեղ են զբաղեցնում վկա կամ տուժած երեխաների հետևյալ բնութագրերը՝

1. Երեխայի կենսագործունեության պայմանները,
2. Ֆիզիկական զարգացումը,
3. Ինտելեկտուալ զարգացման մակարդակը և որակական բնութագրերը,
4. Խառնվածքը և բնավորությունը,
5. Հուզական վիճակը,
6. Պատմե՞լ է արդյոք երեխան որևէ մեկին այդ իրադարձությունների մասին, և ու՞մ:

Երբեմն երեխայի գիտակցումը, որ իր տված վկայությունները կարևոր են և արժանի ուշադրության, կարող է աղավաղել դրանք՝ ճոխացնելով որոշ հանգամանքներ և իրադարձություններ՝ սեփական անձի նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար [2]:

3.2. Հարցաքննության իրականացման ընթացքում դեռահասության հոգեբանական առանձնահատկությունների դերը

Դեռահասությունը համարվում է ամենադժվար ճգնաժամային տարիքներից մեկը՝ բնութագրվելով ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական նորագոյացություններով և փոփոխություններով, որոնք նախապատրաստում են երեխային սեռական, ֆիզիկական և հոգեկան հասունության: Դեռահասասների հոգեկանի առանձնահատկությունները պայմանավորված են նրանց կենսափորձի, գիտելիքների և պատկերացումների սահմանափակմամբ, ադապտիվ վարքային հմտությունների չձևավորվածությամբ: Դեռահասությունը բնութագրվում է նոր սոցիալական կապերով, ֆիզիկական և սեռական զարգացմամբ: Հորմոնալ համակարգի ինտենսիվ գործառնությունը նշանակալի բարձրացնում է դեռահասի դրդվողականությունը, հուզական ռեակտիվությունը և անկայունությունը, հաճախ նպաստում է բռնկումներին, անզսպվածությանը, նյարդային համակարգի գրգռականությունը գերիշխում է արգելակման գործընթացի վրա, և դեռահասը կարող է բուռն և կտրուկ արձագանքել արտաքին ազդակներին: Դեռահասները կարող են շատ անտարբեր լինել արտաքին իրադարձությունների հանդեպ, քանի որ խորասուզված են իրենց փոփոխվող ներաշխարհի մեջ: Երկրորդ փուլում սկսում են հասունանալ երկրորդական սեռական հատկանիշները, փոխվում է վերաբերմունքը հակառակ սեռի նկատմամբ:

Դեռահասի բնութագրական առանձնահատկություններից է հանդիսանում այն, որ նրա մոտ սկսում է առաջանալ հետաքրքրություն հակառակ սեռի նկատմամբ, ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական Ես-ի նկատմամբ: Հոգեբանական Ես-ի ձևավորման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ինքնահաստատման պահանջմունքը, որը մի կողմից դրդում է դեռահասին տարբեր կոնֆլիկտային իրավիճակների մեջ հայտնվելուն, մյուս կողմից իր

հասակակիցների, ընդ որում ապասոցիալական վարք ցուցաբերող հասակակիցների շրջանում հայտնվելուն, որն է իր հերթին նպաստում է տարաբնույթ բացասական երևույթների առաջացմանը: Ուստի դեռահասի ներգրավվումը տարաբնույթ սոցիալական խմբեր, լայն սոցիալական կապերը հանդես են գալիս անչափահասների իրավախախտումների կանխարգելման գործոններ: Դեռահասության շրջանում անձը փնտրում և գտնում է ռեֆերենտ մի խումբ, ընկերներ, որոնց շրջանում ինքնահաստատվում է:

Սակայն չափից ավելին կախվածությունը այդ խմբից, ընդունված դեռահասային կարծրատիպերին հետևելը, նեգատիվիզմը, ռիսկային գործողությունների հակվածությունը, ոչ բավարար սոցիալական վերահսկումը՝ դեռահասի բնութագրիչները, հաճախակի դժվարություններ են ստեղծում դատավարական ողջ ընթացքում՝ նախնական հարցազրույցի, վկայություն կամ ցուցմունք տալու ժամանակ և այլն: Այս շրջանը ներքին կոնֆլիկտային, հակասական հոգեվիճակի շրջան է, որը սեփական մարմնի նախկին պատկերի կորստի և նոր ֆիզիկական Ես-ի ձևավորման արդյունք է: Երեխայի ուշադրությունը սևեռվում է մարմնական փոփոխությունների վրա, որոնք երբեմն շատ ցավագին և հիվանդագին են ընկալվում: Դեռահասը դառնում է չափազանց զգայուն իր արտաքինի հանդեպ, դյուրագրգիռ և անհանգիստ: Այս շրջանի կարևորագույն բնութագրականն է Ես-ի ձևավորումը և հասունության զգացումի առաջացումը: Դեռահասը ձգտում է հավասար դիրք գրավել մեծահասակների հետ, ինչը նկատվում է տարբեր ասպարեզներում: Նա ցանկանում է, որ իրեն վերաբերվեն որպես մեծի, լինել ինքնուրույն, դուրս գալ մեծահասակների ազդեցությունից, ունենալ իր սեփական “կյանքը”, գաղտնիքները: Ի հայտ են գալիս սեփական կարծիքներ, հայացքներ, արժեքներ, որը դեռահասը եռանդով պաշտպանում է: Թեև կարծիքները կարող են լինել շատ ծայրահեղ և հակասական, փոփոխվել կարճ ժամանակահատվածում [1, 4]:

Դեռահասային շրջանին հատուկ են նաև ակնառու-հուզական ուղղվածությունը, առաջին և երկրորդ ազդանշանային համակարգի դիսբալանսով կարևոր հատկությունների ընդհանրացման ոչ բավարար զարգացվածությամբ, և դրան հակառակ ոչ էական հատկություններին ընդհանրացված ամփոփումներ տալու հակվածությունը: Դեռահասները բնութագրվում են ընկալման և երկարատև հիշողության փոքր ծավալով, օբյեկտների տարածական հատկությունների ընկալման աղավաղմամբ՝ հեռավորությունը, չափը, կոնֆիգուրացիան, գունային գամման, ինչպես նաև ժամանակի ընկալման, իրադարձությունների ժամանակային հաջորդականության աղավաղումներով: Նրանց ձգտումը նոր տպավորություններին կարող է հանգեցնել պրոակտիվ (ունեցած գիտելիքներն ու փորձը խանգարում են նոր ինֆորմացիայի ընկալմանը, աղավաղում կամ խանգարում են ամրապնդվել ամբողջությամբ,) և ռետրոակտիվ (նոր ստացված ինֆորմացիան, նոր ձևավորված հմտությունը հետադարձ

ազդեցություն է ունենում նախկինում ունեցած գիտելիքների փորձի, պատկերացումների վրա, այսինքն՝ նոր ինֆորմացիան նպաստում է հին ունեցած ինֆորմացիայի մոռացմանը) արգելակմանը:

Հարցաքննությունների ժամանակ դեռահասները կարող են տալ կեղծ ցուցմունքներ՝ պայմանավորված մի շարք առանձնահատկություններով: Դրանց շարքում կարելի է նշել դեռահասի նմանակումը ռեֆերենտ որևէ այլ անձին, խոսել «ինչպես պետք է» և այլն: Սուտ ցուցմունքներ տալու ժամանակ դեռահասները շատ դեպքերում խոսում են հակասություններով, անհամապատասխանություններով՝ առանց ուշադրություն դարձնելու կարևոր, բայց մանրուքների վրա:

Ուստի դեռահասի հետ կոնտակտի ստեղծման համար և, հետևաբար, արդյունավետ հարցաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ է նախապատրաստական փուլում ծանոթանալ և զրուցել դեռահասի ծնողների, ուսուցիչների և սոց. մանկավարժների հետ, նրա դաստիարակության, կենսակերպի, կյանքի որակի, հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններ ունենալու համար: Դատավորը կամ դատախազը պետք է ունենա տեղեկություն դեռահասի ընտանիքի առանձնահատկությունների վերաբերյալ՝ ինչպիսի փոխհարաբերություններ են այդ ընտանիքում, ոչ լիարժեքության դեպքում ում հետ է ապրում, մյուս ծնողի բացակայության պատճառը և այլն [3, 4]:

Ինչպես արդեն նշվել էր, անհրաժեշտ է հաշվի առնել դեռահասի մտավոր զարգացվածության աստիճանը [1-3, 6]: Նույնիսկ այն դեպքում, երբ նրա մտավոր զարգացումը հետ է մնում իր փաստացի տարիքային զարգացումից, դեռահասը կարող է վկայություն տալ համապատասխան այն տարիքին, որին համապատասխանում է իր մտավոր զարգացումը:

Դեռահասը հետաքրքրված է իր ներքնաշխարհով, վերլուծում է տարբեր կողմեր, անձնային որակներ, համեմատում նշանակալից անձանց հետ, վերլուծում է, թե ինչպիսինն է իրականում, ինչպիսին կուզենար լինել: Այս տարիքում դեռահասը հանդիպում է հետևյալ հիմնական խնդիրներին՝

1. ծնողներից ինքնավարության և անկախության ձեռքբերում
2. նույնականացման ձևավորում, ամբողջական Ես-ի ստեղծում, որը ներդաշնակորեն կամբողջացնի տարբեր անձնային ասպեկտներ
3. ինքնագիտակցության արագ զարգացում
4. բնավորության ձևավորում
5. խմբավորման ձգտում, որը կբավարարի սերտ անձնային շփման պահանջմունքը
6. ինքնահաստատման ձգտում

7. բարձր հուզականություն
8. սեփական անձի փորձարկումներ տարբեր իրավիճակներում:

Կյանքի նշված շրջանը իրենից ներկայացնում է մի ժամանակահատված, որի ընթացքում մարդը գործ է ունենում իր հոգևոր և ֆիզիկական գոյության հետ՝ կապված բարդ խնդիրների հետ: Սա ժամանակահատված է, երբ, ինչպես նշում է Աբրամովան, "մարդու հոգին գտնում է իր տեղը այլ մարդկանց շրջանում և սեփական մարմնի մեջ, որն ինտենսիվ փոփոխվելով նոր "տուն" է ստեղծում զարգացող հոգու համար": Ուստի դեռահասների հետ կատարվող աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել վերոնշյալը:

3.3. Մանկահասակ երեխաների տեղեկության ընկալման և փոխանցման հոգեբանական հնարավորությունները (երևակայություն, ընկալում)

Մինչդատական և դատական գործընթացում յուրաքանչյուր դատավոր, դատախազ իր գործունեության ընթացքում հանդիպում է վկաների կամ տուժածների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել դատավարական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Երեխայի հոգեկանի զարգացումը կարելի է դիտարկել որպես ժամանակի ընթացքում իմացական, հուզական և կամային գործընթացների քանակական և որակական ցուցանիշների փոփոխություն, որոնց վրա մեծ նշանակություն ունեն թե՛ արտաքին սոցիալական պայմանները, թե՛ հոգեբանական նախադրյալները, և թե՛ ֆիզիոլոգիական տարբեր գործոններ: Երեխայի հոգեկան զարգացումը պայմանավորված է մի շարք օրինաչափություններով, որոնք նպաստում են երեխայի հոգեկանի զարգացման անհատական առանձնահատկությունների: Դրանց շարքում կարելի է նշել հոգեկանի զարգացման անհամաչափությունը, անկայունությունը, զգայունակությունը, կումուլյատիվությունը (զարգացման յուրաքանչյուր նախորդ փուլի արդյունքը ներառվում է հաջորդում՝ որպես նախահիմք), կոնվերգենտությունը (զարգացման մեջ հոգեկան գործընթացների համաձուլման միտում[83]):

Երեխայի զարգացման յուրահատուկ շրջանն է նախադպրոցական տարիքը, երբ հիմնադրվում են հետագա զարգացման նախադրյալները և որոշվում զարգացման ուղղությունը և ուժգնությունը: Այս շրջանում հատկապես մեծ փոփոխությունների է ենթարկվում անձի իմացական ոլորտը, մասնավորապես՝

[83]http://www.ache.am/index.php?option=com_content&view=article&id=357:35&catid=36&Itemid=221&lang=hy

հիշողությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների հիշողությունը կրում է մեխանիկական բնույթ: Բացի այդ, այն առանձնանում է փոքր ծավալով:

Նախադպրոցական տարիքի և վաղ դպրոցական տարիքի երեխաներին առանձնացնում է տպավորվողականությունը, նոր տպավորությունների որոնումը, ինչը կարող է նպաստել իրադարձության սխալ ընկալմանը, և հետևաբար, դատավարական գործընթացում աղավաղված վկայություններ տալուն:

Միևնույն ժամանակ պետք չի մոռանալ, որ մանկահասակ (4-8 տարեկան) երեխայի տեսողական ընկալումը էապես տարբերվում է մեծահասակի ընկալումից:

Օրինակ. *Մտնելով սենյակ, մեծահասակը ուշադրություն չի դարձնում սեղանի կամ աթոռի տակ գտնվող իրերին, իսկ երեխան կարող է այն տեսնել, քանի որ դրանք գտնվում են ֆիզիկական առավել մոտ տարածության վրա: Երեխայի ընկալումը մեծապես կախված է երեխայի անհատական փորձից, կուտակված տպավորություններից, նրա կյանքի արտաքին և ներքին պայմաններից:*

Բացի այդ, մանկահասակ երեխաները բնութագրվում են ոչ կայուն ուշադրությամբ, իմպուլսիվությամբ (անսպասելի ու չգիտակցված մղումների կամ աֆեկտների ազդեցության ներքո կատարվող գործողություններ), անկայունությամբ, բայց միևնույն ժամանակ՝ արդեն կամածին կարգավորմամբ:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*: Այդ իսկ պատճառով դատավարական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը:

Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, դատավորը, դատախազը դատավարական գործընթացը կազմակերպելիս պետք է հնարավորություն ընձեռի երեխաների շարժունակության դրսևորման համար: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, ինչը կարող է նպաստել սուտ տեղեկություններ տալուն և ուշադրության արժանանալուն: Ուշադրության կենտրոնում և սոցիալական, բարոյական դրդապատճառների զարգացումը նույնպես կարող են նպաստել այնպիսի տեղեկությունների փոխանցմանը, որի համար նա կարժանանա գովասանքի և ուշադրության: Դատավարական գործընթացում մանկահասակ երեխաների վկայություն տալու վրա մեծ ազդեցություն է ունենում նաև նրանց

զգացմունքայնությունը և դրա փոփոխությունը: Երեխան կարող է բավարարվածություն ստանալ ոչ միայն անմիջական խաղի կամ այլ գործունեության արդյունքում, այլ նաև դրա երևակայական լինելու *կամ պլանավորելու ժամանակ:* Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն, ինչը կարող է նպաստել դատավարական գործընթացում կեղծ, ուռճացրած տեղեկություններ հաղորդելու համար:

Նախադպրոցական և վաղ դպրոցական տարիքում առավել նշանակալի փոփոխությունների է ենթարկվում երեխայի հիշողությունը: Երեխան կարող է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների՝ երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է: Այդ տարիքի երեխաներին հատուկ է իհարկե մեծ քանակի նյութի մտապահումը, սակայն նրանք կարող են ուշադրություն չդարձնել իմաստային տարրերի վրա, ինչը շատ կարևոր է հարցաքննության անցկացման համար: Ուստի երեխաների հետ աշխատելու հմտություններ ունեցող դատավորը և դատախազը կարող են նպաստել երեխայի մոտ տվյալ դեպքի հետ կապված իմաստային տարրերի վերարտադրմանը: Կրտսեր դպրոցական տարիքի նորագոյացություններից է հանդիսանում նաև կամածին ուշադրության զարգացումը, ինչի շնորհիվ նրանց մոտ զարգանում է դիտողականությունը, երևույթների էության ըմբռնումը, հասկացումը և այլն:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում *մտածողության* զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն հետո զարգանում է նաև վերացական մտածողությունը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները [14]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկահասակ երեխաների կողմնորոշված են այն մարդկանց կամ գործողությունների ընկալմանը, որոնք տարբերվում են իրենց վառ, տարբերվող և անսովոր լինելով:

Օրինակ. Իրենց զարգացման վաղ շրջաններում մանկահասակ երեխաները սեփական փորձի հիման վրա ծանոթանում են այնպիսի գործողություններին, ինչպիսիք են՝ հարվածելը, հրելը, կռվելը, ինչի շնորհիվ կարողանում են տարբերակել նմանատիպ գործողությունները այլ մարդկանց վարքում: Ուստի հայտնվելով կոնֆլիկտային իրավիճակում նրանք համապատասխանաբար

կընկալեն նման գործողությունները: Սակայն իրենց տեսածը և ընկալածը փոխանցել միայն խոսքերով մանկահասակ երեխաների մոտ առաջացնում է դժվարություններ: Նրանք շատ դեպքերում իրենց ընկալածը ցույց են տալիս նույն գործողություններով: Մանկահասակ երեխաներին հատուկ է նաև կենտրոնացնել իրենց տեսածը և տարածել բոլորի վրա:

Օրինակ. *քննիչի հարցին, թե ի՞նչ էին անում բակում, 6 տարեկան Ն.-ն ասում է՝ կռվում էին: Քննիչի հարցին «բոլո՞ր», վկան պատասխանում է, որ վիճում էին ընդամենը երեքը, իսկ մնացածը ուղղակի գտնվում էին բակում:*

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ երեխաների հետ հարցաքննությունը նույնպես կարող է ունենալ իր կարևոր դերը քրեական գործի ընթացքի վրա, եթե երեխաների հետ աշխատող մասնագետները հաշվի առնեն տվյալ տարիքային խմբի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները և նրանց հնարավորությունները ընկալելու և վերարտադրելու տվյալ իրադարձությունը: Ինչպես և դեռահասների շրջանում, այնպես էլ երեխաների հետ աշխատանքի ժամանակ կարևոր փուլ է հանդիսանում կոնտակտի հաստատումը, բարիդրացիական մթնոլորտի ստեղծումը, որից հետո նոր կարելի է անցկացնել մասնագիտական հարցաքննություն:

ՄԱՍ 4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

Մինչդատական և դատական գործընթացում տուժած կամ վկա հանդիսացող անչափահասների հետ աշխատանքի ժամանակ բարձր արդյունավետություն ապահովելու, ինչպես նաև երեխաներին չվնասելու սկզբունքին հետևելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին՝

1. Մինչդատական գործընթացը իրականացնել դատարանից, դատախազությունից և այլ իրավական մարմնից դուրս, երեխայի համար սովորական պայմաններում, համապատասխան կահավորված սենյակներում:

2. Հարցաքննությունը անցկացնել ոչ դպրոցական ժամերին՝ սոցիալական ինչեղությունից զերծ պահելու նպատակով:

3. Անչափահասների հետ հարցաքննությունը չպետք է գերազանցի 1 ժամը, հոգնածությունը բացառելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում պետք է տալ դադարներ, կամ դադարեցնել, երբ անչափահասը հրաժարվում է շարունակել մասնակցել մինչդատական և/կամ դատավարական պրոցեսին:

4. Հնարավորության դեպքում դատի ժամանակ օգտագործել մինչդատական փուլում ստացած տեղեկության տեսաձայնագրությունը, այլ ոչ թե երկակի կամ եռակի անգամ երեխաներին ենթարկել սթրեսային վիճակին:

5. Անչափահասի հետ հարցաքննության ժամակարգը պահպանելու և այն արդյունավետ օգտագործելու նպատակով, անհրաժեշտ է նախապատրաստական փուլում հաշվի առնել այն ամենը, ինչը կապված է անչափահասի հոգեբանական, սոցիալական, մշակութային, տարիքային, սեռային, կրոնական պատկանելիության հետ: Որքան շատ ժամանակ է անցկացվում նախնական տեղեկության ստացման փուլում, այնքան քիչ ժամանակ է ծախսվում հարցաքննություն վարելու վրա:

6. Անչափահաս տուժած կամ վկա հանդիսացող անձանց հետ արդյունավետ հարցազրույց իրականացնելու համար անհրաժեշտ է զարգացնել դատավորների, դատախազների, քննիչների հաղորդակցման հմտությունները, կազմակերպական հմտությունները, հուզական

կայունությունը, ինքնաճանաչումը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից հոգեբանական կրթվածությունը տարիքային, սեռային, մշակութային, անհատատիպաբանական, հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Այս առումով նպատակահարմար է անչափահասների հետ աշխատող դատավորների, դատախազների, քննիչների հետ պարբերաբար անցկացնել գիտագործնական դասընթացներ, կլոր-սեղան քննարկումներ, դիսկուրսներ, երբ կքննարկվեն դատավարական գործընթացում ծագած դժվարությունները, խոչընդոտները և այլն:

7. Անչափահասների հետ աշխատող իրավապահ անձիք իրենց արհեստավարժությունը տվյալ ոլորտում զարգացնելու համար պետք է աշխատանք տանեն իրենց հոգեբանական գրագիտությունը և կրթվածությունը բարձրացնելու ուղղությամբ՝ հիմնվելով ժամանակակից հոգեբանական գրականության վրա (նայե՛լ գրականության ցանկում):

8. Ինչպես և մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հետ տարվող բոլոր քրեական գործերի ժամանակ, անկախ անչափահասի դերակատարությունից, նա կլինի մեղադրյալի, տուժածի թե վկայի դերում, անհրաժեշտ է հատուկ մասնագետի՝ հոգեբանի կամ սոց.մանկավարժի ներկայությունը, ով հաշվի առնելով անչափահասի կենսաբանական, հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունները՝ կօգնի արդյունավետ կազմակերպել ինչպես մինչդատական, այնպես էլ դատական գործընթացը՝ առանց վնասելու դեռ չձևավորված հոգեկանը:

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Նախնական հարցազրույցը անցկացնել երեխաների հետ հնարավորինս արագ՝ տվյալ իրավիճակը ընկալելուց հետո: Այն դեպքերում, երբ իրադարձությունը շատ է հուզել երեխային, նպատակահարմար է նախնական հարցազրույցը անցկացնել 2-3 օր անց:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ՝

- Երեխայի կամ անչափահասի տարիքային և սեռային առանձնահատկությունները,
- Երեխայի կամ անչափահասի զգայական, իմացական, հուզական, կամային ոլորտների զարգացման առանձնահատկությունները,
- Սոցիալական կարգավիճակը և խոցելիությունը,
- Անհատական ոճը և այլն:

Մեկ հարցաքննության ժամանակ ստանալ սպառիչ տեղեկություն, և ձերբազատել վկա կամ տուժող հանդիսացող անչափահասին կրկնակի հարցաքննություններից:

Կրկնակի հարցաքննությունների ժամանակ տուժողը կամ վկան կարող է հիշել ոչ թե իրադարձությունը, այլ այն, թե ինչ է պատմել նախնական քննության ժամանակ:

Հարցաքննության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է հիշել.

Կրկնակի հարցաքննությունը ոչ թե օգնելու է մանրամասները վերհիշելուն, այլ հակառակը՝ կարող է երևակայական տեղեկության աղբյուր դառնալ, հատկապես մանկահասակ երեխաների դեպքում:

- Անչափահասների հետ հարցաքննությունը չպետք է գերազանցի 1 ժամը՝ հոգնածությունը բացառելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում պետք է տալ դադարներ, կամ դադարեցնել, երբ անչափահասը հրաժարվում է շարունակել մասնակցել մինչդատական և/կամ դատավարական պրոցեսին:
- Անհրաժեշտ է հարցադրումները կատարել հստակ և պարբերաբար հստակեցնել, արդյո՞ք ճիշտ եք հասկացել տուժածի կամ վկայի ցուցմունքները:
- Երեխային պետք է լսել ուշադրությամբ և շահագրգռվածությամբ, նույնիսկ, եթե նա հարցազրույցի ընթացքում շեղվում է գործի բուն էությունից, ազատ և անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու համար:
- Հաշվի առնել երեխայի տարիքային, սեռային, կրոնական, ազգային, սոցիալական առանձնահատկությունները՝ առավելագույնս համապատասխանեցնելով նրա համոզմունքներին և ավանդույթներին:

Դատավարական գործընթացի յուրաքանչյուր փուլում տվյալ գործով հարցաքննվողների նկատմամբ, և հատկապես անչափահասների մասնակցությամբ, պետք է ցուցաբերել հարգալից վերաբերմունք՝ պահպանելով նրանց արժանապատվությունը: Հարցադրումները պետք է ուղղված լինեն ոչ թե անձին մեղադրելուն ուղղակի կամ անուղղակի, այլ տվյալ իրադարձությանը, դեպքին:

Հարցաքննության կանչելու ժամանակը անհրաժեշտ է նշանակել ոչ դպրոցի ժամերին, որպեսզի տվյալ գործին առնչությունը հայտնի չդառնա նրա շրջապատին, համադասարանցիներին, կուրսեցիներին և ընդհանրապես ընկերներին, զերծ պահել սոցիալական հնչեղությունից:

Հնարավորության դեպքում դատաքննության ժամանակ օգտագործել մինչդատական փուլում ստացած տեղեկության տեսաձայնագրությունը, այլ ոչ թե երկակի կամ եռակի անգամ երեխաներին ենթարկել սթրեսային վիճակին:

Հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել որոշ մանկավարժական պահանջներ՝ չֆիքսել անչափահասի ուշադրությունն այն հանգամանքների վրա, որոնք կարող են բացասաբար ազդել նրա դաստիարակության վրա, բացառել անբարոյական պահվածքը և այլն:

Երեխային ուղղված հարցը տրվում է միայն վերաձևակերպումից հետո հատուկ մասնագետի կողմից, մասնավորապես հոգեբանի կամ սոց. մանկավարժի՝ ձևակերպելով հարցը երեխայի համար մատչելի և հասկանալի ձևով:

Հարցազրույցը սկսել բաց հարցերով, որոնք ուղղված են հարցվողների կարծիքը, մոտեցումը, տեսակետը իմանալուն. փակ հարցերը խոչընդոտում են հարցազրույցի հետագա զարգացմանը:

Հարցաքննության անցկացման ժամանակ, երբ դատավորը գրանցում է սուտ տեղեկություններ, պետք է փորձել պարզել սուտ խոսելու մոտիվները՝ կեղծ ընկերության գաղափարը, ամոթի զգացումը, վախի զգացումը, որը կարող է առաջացած լինել, եթե նրան վախեցրել են, ահաբեկել են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արզումանյան Ս., Գրին Է., Իրավաբանական հոգեբանություն, Եր., 2004թ.,. 432 էջ:
2. Ավանեսյան Հ.Մ., Պապոյան Վ.Ռ., Գալստյան Ա. Ս., Հովակիմյան Գ.Ռ. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում://Մեթոդական ձեռնարկ., Երևան: «Առողջության և կրթության հայկական կենտրոն» ՀԿ, 2009, 151 էջ:
3. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն: Կոլեկտիվ մենագրություն, հեղ. Աղուզումցյան Ռ. Վ., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ., Սարգսյան Դ. Յ., Ամիրյան Ծ. Ս.: // Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 142 էջ:
4. Գրին Է., Հոգեբանությունը իրավապահ գործունեությունում, Եր., Զանգակ-97, 2007, 144 էջ
5. Բեջանյան Ա., Պապոյան Վ., Գալստյան Ա. Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթ: // Մեթոդական ուղեցույց: Երևան: «Ապագա» հոգեբանական ծառայություն հրատարակչություն, 2917, 147 էջ:
6. Հարությունյան Ն. Ա., Ասրիյան Է. Վ., Ստեփանյան Լ. Ս. Հուզակամային ոլորտի հոգեբանության պրակտիկում /Ուսումնամեթոդական ձեռնարկ, Հեղ. հրատ., Երևան, 2014, 172 էջ
7. Հարությունյան Ն. Ա. Ընտանեկան հոգեբանական խորհրդատվություն: Ուսումնական ձեռնարկ / Եր.: «Ուրարտու» համալասարանի հրատ., 2016, 184 էջ:
8. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում: // Մեթոդական ուղեցույց: Կազմողներ՝ Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ.: // Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ:
9. Ստեփանյան Լ.Ս. Ագրեսիվ վարքի հոգեբանություն/Մեթոդական ուղեցույց, Հեղ հրատ., ԵՊՀ, 2013, 80 էջ
10. Տաթևյան Հ. Ա. Զարգացման հոգեբանության հիմունքները / Երևան: Հեղինակային հրատարակություն, 2013. 163 էջ.
11. «Դատաքննության փուլում անչափահասների հարցաքննությունների դիտարկում» www.hra.am/i/up/book-10.12.13.pdf
12. Ратинов А.Р. Судебная психология для следователей - М.: ВШ МООП СССР,1967,с.90
13. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. Монография. М.: Юристъ, 1996. - 336 с.
14. Воробьев Г. А. Тактика и психологические особенности судебных действий. Краснодар: Изд-во Краснодарского университета, 2006. - 390с.

15. Дозорцева Е.Г. Задачи ювенальной юридической психологии//Второй национальный конгресс по социальной психиатрии «Социальные преобразования и психическое здоровье» М.:2006./ http://docplayer.ru/27604547-Zadachi-yuvenalnoy-yuridicheskoy-psihologii.html
16. Пронин К.В. Тактика допроса в суде: процессуальные и криминалистические аспекты: Учебное пособие для вузов.- М.: ЗАО Юстицинформ, 2006- 352с.
17. https://armineab.wordpress.com/2014/04/11/դպրոցահասակ-երեխայի-անձի-զարգացման/
18. https://evgeniyvolkov.ru/takticheskie-priemyi-doprosa.html/ тематические вопросы допроса
19. www.ache.am/index.php?option=com_content&view=article&id=357:35&catid=36&Itemid=221&lang=hy

Տպաքանակը՝ 300
Տպագրությունը՝ լազերային-թվային, ֆորմատ A4

«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

375008, ք. Երևան, Մ. Խորենացի 162ա
հեռախոս 574406, ֆաքս 574453
էլ. հասցե՝ info@lawinstitute.am